№ 37—ՏԱՍՆԵՒՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ—№ 37

1895 ԱՊՐԻԼԻ 2 (14) ԿԻՐԱԿԻ

Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռուբլի, 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.
Առանձին համարը 7 կոպէկ։

Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և Կենդրոնական գրավաճառանոցում։

Հասցէն՝ Тифлисъ, Редакція „Ардзагаякъ".
կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang."

ԱՐՁԱԳԱՆՔ

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

Խմբագրութիւնը բաց է ամենայն օր 10—1 ժամ (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

Տօների պատճառով «Արձագանքի» հետևեալ համարը լոյս կը տեսնի ուրբաթ, ապրիլի 7-ին։

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՔԱՂՑՐԵՂԷՆՆԵՐԻ
ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Կ. ՍԱՔԱՅԵԱՆՑԻ
Սօլօլակի փող., տ. Թայիրեանի, № 3.

Կարելի է ստանալ ամեն տեսակ **ՊԱՍՔԱՆԵՐ**, նոյնպէս և **ՄԱԶՈՒՐԿԱ** և **ԿՈՒԼԻՉ**, այլ և **ՊԱՆՐՈՎ ՊԱՍՔԱ**։
Ընդունվում են պատուէրներ և կատարվում են ամենայն ճշդութեամբ։ Խնդրեմ յարգելի հասարակութեան ուշադրութիւն դարձնել ընտիր յատկութեան վրայ։
Յարգանօք՝ Կ. ՍԱՔԱՅԵԱՆՑ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Զատիկ։
Մամուլի ստացած զատկական ընծան։
Վեհափառ Հայրապետ Մկրտիչ Ի Խրիմեանի կարծիքը մամուլի մասին։
Պարլամենտի նիստ։
Անգլիական գործեր։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Կ. Պօլսից։ Հայ եպիսկոպոսների պահանջը։ Գիւղատնտեսական Նախագահութեամբ ժողով։ Նոր-Նախիջևանից։ Պետերբուրգից։ Շուշուց։ † Իշխան Զ. Ա. Ջօրջաձէ։ Կանանց բժշկական կուրսերի մասին։ Ալեքսանդրապոլից։ Թեհրանից։ Երկու թիւրիմացութիւն։ Պետերբուրգից։ Թոշակաւորներ Մոսկվայի համալսարանում։ Աշակերտական գրադարան։ Բժշկ. Մ. Արուտամեանց։ Սիմֆերոպոլից։ Թիֆլ. Փոխ. Վարկի Ընկ. ընդհ. ժողովի որոշումը Բժշկ. Ա. Բաբայեանի գրքոյկը։ Նամակ Պետերբուրգից։ Բոլգարիայի էգզարքոսի այցելութիւնը Կ. Պօլսի Հայոց Պատրիարքին։
ՏԱՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆ.—Մուշից։ Լուրեր։
ՖԵԼԻԵՏՕՆ.—Հայկական խնդիր։
ՀԵՌԱԳԻՐՆԵՐ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զ Ա Տ Ի Կ

Ամբողջ քրիստոնեայ աշխարհն այսօր հրճվում է, տօնում է Զատիկը—Քրիստոսի Յարութեան յիշատակը։

Դեռ երէկ մարդկութեան Զատիկ պարգևող Փրկիչը կանգնած էր Պիղատոսի առաջ՝ շրջապատուած իրեն հալածող քահանայապետներով, դպիրներով, փարիսեցիներով և ամբոխով. դեռ երէկ մենք մտաբերում էինք թէ ինչ ծանր վիշտ է կրում այն Ոգին, որ իւր բոլոր էութիւնը, իւր բոլոր սէրը նուիրել է մերձաւորին և այն էլ այն մերձաւորին, որ իրեն ուզում է ի խաչ հանել. մենք տեսնում էինք թէ նա, որ ինքն է կեանք և ճշմարտութիւն, մնացել է յուսահատուած և լուռ և ոչինչ չէ պատասխանում Պիղատոսի հարցման՝ թէ «ինչ է ճշմարտութիւնը»։ Մի վայրկեան առաջ նա ասում էր. «Ես աշխարհ եմ եկել որ վկայեմ ճշմարտութիւնը», և նա վկայել էր. բայց այժմ զգում էր որ Պիղատոսի հարցումն անտեղի չէր թէ ինչ է ճշմարտութիւնը։ Ճշմարտութիւնն այդ րոպէին այն էր, որ մի ամբողջ ազգ իւր ամենաարժանաւոր զաւակին, որ նուիրել էր իրեն իւր բոլոր սիրտը, իւր ոգին, իւր էութիւնը—կալանաւորել էր իբրև գողի և աւազակի և բերել էր երկրի օտար դատաւորի մօտ ու պահանջում էր որ խաչ հանի նրան։ Այո, այդ էր այդ րոպէի ճշմարտութիւնը, սոսկալի ճշմարտութիւնը՞։

Մարմնացեալ սէրը, հեզութիւնը, անձնուէր, լուռ և գլխակոր մըցում էր մարդկային նախանձի, ստի և կոյր կրքի հետ։ Կոյրը տեսնում էր, խուլը լսում էր, համրը խօսում էր, բայց ամբողջ հրէից ազգը կուրացել էր և աղաղակով պահանջում էր նրա արիւնը, որ ամենքին և իւրաքանչիւրին միայն սիրել էր և սիրում էր և որի միակ պատուիրանն էր՝ «սիրեցէք միմեանց ինչպէս ես ձեզ սիրեցի»։

Բայց այդ սէրն ինչպէս էր արտայայտում կեանքի մէջ մարդկութեան Փրկիչը։ Խնամք, արդահատանք, գթութիւն դէպի թշուառը, ճնշուածը, հիւանդը, հալածեալը և հրապարակական անկեղծ նախատինք դէպի ստախօսը, կեղծողը, փարիսեցին։ Եւ ահա մարդկութեան 99/100 կազմող այդ ստուեր ու կեղծիքը ցանկացաւ անպատճառ ի խաչ հանել, սպանել նրան, որ սէր ու արդարութիւն է բաժանում մարդկանց։ Այդ կեղծիքը կարծեց և հաւատացած էր, թէ մարդն սպանելով, կըսպանի և միտքը. այդ էր նրա հասկացած ճշմարտութիւնը, և նա նրան գլուխ բերաւ։ Բայց երբ մարմինը սպանեց պրծաւ, միտքը կրկին մնաց, և այն ժամանակ միայն նա հասկացաւ, թէ որն է ճշմարտութիւնը։

Նա հասկացաւ, այո, բայց գոր ծագելմը, կամ ... Որդեօք թագաւորում է սէրը մարդկութեան մէջ, արդեօք չքացա՞ն դըպիրները և փարիսեցիները, արդեօք ձևականութիւնը փոխուե՞ց իսկական զգացման և գործի։ Ո՛չ լիովին և ոչ բոլորովին։ Որովհետև այդպիսի չարագործութիւն դեռ մարդկութիւնը չէր կատարած և կատարելուց առաջ դեռ չգիտէր և մտքիցն անգամ չէր անցրել, թէ ինչ փոփոխութիւն կը տիրէ իւր հոգու վրայ։ Նա ծարաւի էր անմեղ, արդար արեան, և երբ տեսաւ որ արդար մարդն իրեն զոհեց աշխարհին, զարմացաւ, սոսկալի ցնցումից ըթափեցաւ և աղաղակեց, թէ դա Աստուած է, դա ինքն է ճշմարտութիւնը։ Մարմինը չկար, վրէժի առարկան չքացել էր, այժմ ոգին էր առաջ եկել և բաւականութիւն էր պահանջում և այդ պահանջին մարդկութիւնը չկարողացաւ միանգամից բաւականութիւն տալ։

Սակայն ճշմարտութիւնն արդէն քայքայել էր երկաթեայ պատերը, իւր լոյսն սկսում էր սփռել չորս կողմը և մինչև այսօր նա շարունակ լուսաւորում է այն կեանքը, որ առաջ խաւարի մէջ էր։ Այդ կեանքը մեծ յառաջադիմութիւն չէ արել, դեռ նրա մէջ չէ թագաւորում անսահման սէրը և արդարութիւնը, բայց նրա մէջ անարգել մտնում է մտքի լոյսը և լուսաւորում է թէ ստոր և թէ ճշմարտութիւնը. — դա է միակ գրաւականը թէ մարդկութիւնը փրկութեան ճանապարհի վրայ է և թէ նա սկսում է հասկանալ որ 1895 տարի սրանից առաջ Գողգոթայի գլխի խաչափայտից է ըսկսում իւր փրկութիւնը։

Սակայն միթէ այդ հասկանալուց յետոյ բաւական է միայն հրճուել, ուտել և ըմպել և ուրախ լինել Քրիստոսի յարութեան տօնի յիշատակի օրը։ Չէ՞ որ այդ ըստ երևոյթին ընդհանուր հրճուանքի ... և անհամար թշուառներ կան, որոնք տեղ չունին իրենց գլուխը դնելու համար։ Իսկ չէ՞ որ Քրիստոսի ամենամեծ հրճուանքն ու երջանկութիւնն այն էր որ այդպիսիներին գտնէ։ Իսկ ո՞վ մեզանից փնտռեց և չգտաւ։ Եւ եթէ մենք այսպիսի մի օր չկատարենք մեր քրիստոնէական պարտաւորութիւնները, չհեռանանք մեր երջանիկ և պարարտ սեղաններից, մեր տաք սենեակներից, մեր ազգակիցների նեղ շրջանից և չփնտռենք ամենքից մոռացուած թշուառներին, էլ ե՞րբ կ՚անենք այդ ամենը, էլ ե՞րբ կը գտնենք մեր հոգեկան մխիթարութիւնը։

Թող իւրաքանչիւր հայ քրիստոնեայ այսօր՝ «Շնորհաւոր Զատիկ» և «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» արտասանելուս լաւ մտածէ և իրեն հաշիւ տայ, թէ ճշմարիտ որքան շնորհաւոր է իր համար այդ Զատիկը և թէ Քրիստոսի յարութեան հետ միասին արդեօք իր սրտի մէջ յարութիւն առնո՞ւմ է մարդկային սիրոյ զգացումն։ —Այն ժամանակ կըլինի իսկական Զատիկը։

ՄԱՄՈՒԼԻ ՍՏԱՑԱԾ ԶԱՏԿԱԿԱՆ ԸՆԾԱՆ

Քրիստոսի յարութեան տօնին, մարդկութեան պայծառ յոյսերի ընձիւղելու այդ առաջին օրը՝ աւելի լաւ ընծայ չէր կարող լինել քան այն, որ հեւսեսի մամուլի միջոցով ստացաւ մեր մամուլը։ Այդ ընծան մամուլին ուղարկում է մեր օրերի ամենապայծառ մտքի և զգացմանց ներկայացուցիչ, ժամանակակից բանաստեղծ - փիլիսոփայ հայ ազգի սիրեցեալ հայրապետ Խրիմեան հայրիկը։ Մամուլը պիտի ցնծայ, այո, այդ հզօր խօսքերից և պիտի նայէ ու մտածէ, թէ որքան սրբազան է, որքան բարձր է իւր կոչումը։ Քրիստոսի պաշտօնեան՝ այսօր ոչ մի հոգևորականի մէջ դեռ չտեսնուած լուսամտութեամբ ասում է, թէ «այժմ մարգարէներ և առաքեալներ չկան, այլ ինչ որ նրանք էին գործում, այն ամենը բաժին է դարձել լրագրական և օրագրական գործիչներին»։ Այս խօսքերը սնապարծութեամբ չէ ասում մի որ և է սովորական լրագրական գործիչ, այլ այն մեծ Մարդը, որ իւր ամբողջ կեանքում մարգարէների և առաքեալների շաւղով է ընթացել, որ եկեղեցու բեմից քարոզել է շարունակ սէր և լոյս։ Այդ խօսքերը՝ ինչ որ Վեհափառ Հայրապետն ասում է մամուլի և նրա պաշտօնեաների համար, հոգևորականի սովորական առօրեայ խօսքեր չեն, այլ մի ներբող՝ գիտութեան, մարդկային մտքի և բարոյականութեան յառաջադիմութեան. բայց նա միևնոյն ժամանակ մի արդար ցասման նախատինք է այն մամուլի վերաբերութեամբ, «որ շեղուել է իր ուղիղ ճանապարհից, որ դաւաճանում է իր բարձր կոչման և անարժանօրէն ծառայում է օտար կրքերին»։

Վեհափառ Հայրապետը մատնացոյց է անում այն երջանկութեան վրայ, որ մարդկանց տալիս են գործադրական գիտութիւնները. նա քաջալերում է մարդկանց և ստիպում է սիրել այդ գիտութիւնն իբրև փրկարար տարր, և համոզուած է որ այդ գիտութեան հաղորդիչը մամուլը պիտի լինի։ «Լուսաւորել հասարակական ինքնաճանաչութիւնը—ասում է Վեհափառ Խրիմեանը—տարածել յառաջադիմութեան գաղափարներ, գիտութեան լոյս մտցնել կեանքի շրջաների մէջ, ձգել բարւոյ, քաղաքութեան և եղբայրական սիրոյ սերմեր մարդկանց սրտերում,—այս մտքով մամուլը անկասկած կենսատու, ստեղծագործիչ և բարերար ոյժ է և նրա մէջ գործող անձանց պարտականութիւնները սուրբ են...»։ Մամուլի համար շատ բան է ասուած, բայց այսչափ ուժեղ, հաւատով և համոզմամբ լի խօսք դեռ ոչ ոք չէ ասել այն օրից, երբ մամուլը գոյութիւն ունի աշխարհիս երեսին։

Մարգարէներ և առաքեալներ—

Ֆ Ե Լ Ի Ե Տ Օ Ն

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ՄԻ ԱԶԴԵՑԻԿ ՊԱՏԳԱՄԱՒՈՐՈՒԹԻՒՆ.—ԼՈՐԴ ԿԻՄԲԵՐԼԷՅԻ ՃԱՌԸ
(«The Daily News» մարտի 30)

Լորդ Կիմբերլէյը, ընկերակից ունենալով Արտաքին գործոց նախարարի օգնական սէօր Էդուարդ Գրէյին, ընդունեց երէկ Foreign Office-ում հայկական խնդրի առթիւ Անգլօ-հայ ընկերութեան ձեռքով հրաւիրուած մի բազմամարդ և շատ նշանաւոր պատգամաւորութիւն։ Պատգամաւորութեան առաջնորդն էր Պարլ. անդ. Ֆ. Ս. Ստէվենսըն։ Ներկայ էին և կամ թէ նամակով ցանկութիւն յայտնեցին ներկայ լինելու՝ Պարլ. անդ. միստր Ուիլ. Կէն, Պ. ա. սէօր Ջօզէֆ Պիզ, Պ. ա. միստր Ձաննինգ, Պ. ա. միստր Ուիլ. Պ. Բայս, Պ. ա. Ալբերտ Սպայսր, Պ. ա. միստր Հ. Պօլ, Պ. ա. դօկտօր Մակ Գրէգօր, Պ. ա. միստր Ուիլ. Օ. Կլուֆ, Պ. ա. գնդապետ Սեսիլ Նօրթօն, Պ. ա. միստր Դ. Էնսուօրթ, Պ. ա. միստր Վուդ, Պ. ա. միստր Տ. Բուքանան, Պ. ա. միստր Ս. Սմիթ, Պ. ա. միստր Ուարնէր, Պ. ա. սէօր Ջօրջ Սիտուէլ, Պ. ա. սէօր Կարմիչէլ, Պ. ա. Ջ. Ա. Պիզ, Պ. ա. գնդապետ Սանդայս, Պ. ա. միստր Բաուսօն Ճաու, Պ. ա. դօկտօր Ֆարքարսօն, Պ. ա. միստր Ջ. Մ. Մօրսօմ, Պ. ա. միստր Ճուէնն, Պ. ա. սէօր Ջօն Լէնգ, Պ. ա. սէօր Լ. Լայէլ, Պ. ա. միստր Ա. Ուէբ, Պ. ա. միստր Ստիւարտ Ուալլաս, պրօֆեսօր Ագար Բիտ (Աւետարանական ազատ եկեղեցու Կոնգրէսի ներկայացուցիչ), գերապատիւ դօկտօր Կլիֆօրդ (Բապտիստների համայնքի ներկայացուցիչ), գերապ. դօկտօր Նիւման Հօլ, գերապ. Ջօն Ջօնստըն (անկախ), երապ. դօկտօր Ուիլ. Հ. Ֆինդ (անկախ), արժանապատ. երէց Էյթըն, գերապ. Կանոն Գօր, գերապ. Պ. անդ. Կանոն Ուիլբերֆօրս, միստր Պ. Վ. Կլայդըն, միստր Մակդօնալդ (անդամ Փօրթ-Ասիայի աւետարանական բժշկական առաքելութեան), գերապ. Հենտ Կուկ (Լօնդոնի գեսլէյէնտ քահանաների ընդհանուր ժողովի ատենադպիր), միստր Ջօն Բեօրնս, միստր Ջօն Բ. Մայերս, գերապ. Վալտեր Կօրֆիլդ, դօկտօր Վալտեր Մօրիսօն, գերապ. Գ. Է. Աշեր, միստր Հ. Պ. Ֆօքսբօրն, գնդապետ Ջօն Բարկըր (General Booth-ի յատուկ նուիրակը), գերապ. Ջօն Շարպ (Բրիտանիայի Բիբլեական ընկերութեան ատենադպիր), միստր Կ. Րիչարդ Իվ, գերապ. Ուիլ. Գ. Կօկհօլտ, միստր Ս. Հօպկինսըն, գերապ. Արթուր Սիմօնդս (Անգլօ-հայկական ընկերութեան Չէշիրի ճիւղի պատուաւոր ատենադպիր), գերապ. Տ. Դ. Գրինս (անդամ Վանի ամերիկական առաքելութեան), գնդապետ Ռէյլսէյ Րօբինսօն (Տարսոնի առաքելութեան անդամ), միստր Ֆ. Ուիլ Ֆօքս, պարոն Վլիսէլիցկի (անդամ Անգլօ-Ռուս գրական. ընկեր.), գերապ. Ուիլ. Մօտրէմ, միստր Ջօն Լօյդ, գերապ. Էվանս Հերբերդ, գերապ. Ուիլ. Կօպլենդ Բօուայ, գերապ. դօկտօր Մէթիւս (Աւետարանական միութեան ներկայացուցիչ), գերապ. Ջօն Լէն (հռոմէական կաթոլիկ) և գերապ. Ջօրջ Ճօրտ (ներկայացուցիչ Բապտիստների միաբանութեան)։

Համակրութեան և ջերմ հաւանութեան գրեր են ստացուել ի միջի այլոց՝ գերապ. դօկտօր Գինիս Րօջէրսից, գերապ. Ֆ. Բ. Մէյերից, դօկտօր Նօրտօն Լօուից (Պարսկաստան) և Պ. անդ. միստր Ր. Ուիլ. Պերկսից։ Պատգամաւորութիւնը գումարուած էր ընկերութեան պատուաւոր ատենադպիր միստր Է. Ատկինի կարճ հրաւիրագրով։

Միստր Ստեվնսըն, ներս տանելով պատգամաւորութիւնը, ասաց. Կրօնական և քաղաքական կարծիքների ամեն տեսակ գոյներ ներկայացնող այս պատգամաւորութեան մեծ վարկն արդէն գրաւական է, միլօրդ, որ այսօր ձեր առջև ներկայանալիս՝ մենք ամենևին մտադիր չենք որ և է նեղութիւն պատճառել կառավարութեան, այլ ընդհակառակըն՝ փափագում ենք վստահեցնել, թէ ինչ զօրեղ քայլ էլ նա անելու լինի Հայաստանում տիրող չարեաց նկատմամբ, միշտ անբաժան օգնութիւն կը գտնէ այդ հարցին առանձնապէս համակրողներից։ (Լսեցէ՛ք, լսեցէ՛ք) Մենք հաստատ համոզուած ենք, որ վերջին տասնուվեց տարուայ ընթացքում Հայաստանի մէջ գործ դրուած վարչութեան վատ եղանակը պիտի արգելուի. նա չէ կարող այլ ևս շարունակուել։ Դրա մասին մենք ունինք 1891 թուականից առաջ ստացուած բազմաթիւ հիւպատոսական զեկուցումներ և շատ տարբեր աղբիւրներից եկած ամենահաւաստի վկայութիւն, որ Հայաստանի կառավարութեան պայմանները,— ի նկատ առնելով որ մենք ոչ միայն ուրիշ պետութեանց հետ միասին որոշ պարտաւորութիւն՝ ենք յանձն առել Բեռլինի դաշնագրով, այլ և մի առանձին պատասխանատուութիւն Կիպրոսի պայմանագրի զօրութեամբ և մեր երկրի 1878 թ. արած քայլով,—ներկայացնում են իրերի մի այնպիսի վիճակ, որին այլ ևս չէ կարելի հանդուրժել։

Մեր ընթացքը հետևաբար հիմնուած է ոչ միայն Բիթլիսի վիլայէթում և ի մասնաւորի Սասունի գաւառում պատահած դէպքերի վրայ, այլ տասնուվեց ամեայ մեծաքանակ փաստերի վրայ, որոնք պարզ պատկերացնում են հայկական նահանգների բուն դրութիւնը։ Տարակոյս չկայ, որ Անգլիայի զգացմունքն առանձին կերպով բորբոքուեցաւ թիւրքական Կոմմիսիայի քննութեան առարկայ դարձած ողբալի պատահարի պատճառով կոմմիսիայի, որին մասնակցում են Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաց նուիրակները։ Այդ քննութեան առթիւ մենք կը ցանկանք նկատել, որ ինչքան էլ մեզ տենչալի լինի, որ դա յերևան հանէ Սասունի գաւառում պատահած մասնաւոր դէպքերի(?) խակական պատկերը, բայց և՛ս աւելի տենչալի է, որ թոյլ չտրուի Տաճկաստանին որևէ հնարով յետաձգել ամբողջ՝ հայկական խնդիրը։ Կը ցանկանք շեշտել, որ բրիտանական մամուլի անդուլ և անվեհեր ջանքերի շնորհիւ, հակառակ ամեն արգելքների, մեր ազգն արդէն ձեռք է բերել պէտք եղած ապացոյցը, որի վրայ հիմնուելով՝ կառավարութիւնը կարող է այժմէն իսկ մի արագ և վճռական քայլ անել։ (Հաւանութիւն)։ Կարծեմ բաւական է մտաբերել Լիբանանում և ուրիշ նահանգներում տեղի գտած կոտորածները, որոնք անհրաժեշտ կացուցին ռէֆօրմ մտցնել այդ տեղերում։ Եւ թէպէտ մենք վստահ ենք, որ Բիթլիսի աղէտալի դէպքերը ուրիշ ռէֆօրմներ յառաջ կը բերեն, բայց և այնպէս մեր աղերսը վերաբերում է ոչ միայն մի առանձին դէպքի, այլ տաճկահայ հայերի ընդհանուր վատ վիճակին, որ տակաւին տևում է՝ հակառակ Բեռլինի դաշնագրութեան յօդուածներին և հակառակ, ի հեճուկս Եւրոպայի հասարակաց կարծիքին։ Մեր փափագած ռէֆօրմները, որոնց մասին խնդրում ենք, չորս են թուով. 1) նշանակել հայկական նահանգների համար մի նահանգապետ, որ գործէ Եւրոպայի վերահսկողութեան ներքոյ և ազատ լինի Կ. Պօլսի միջամտութիւնից. 2) քիւրդերին զինուորական գիւղապետների ենթարկել՝ եւրոպական սպաների ձեռքի տակ. 3) կազմել մի խառն ժանդարմէրի եւրոպացի մեծաւորներով. 3) վերակազմել դատական կարգը, մասամբ Նուբար փաշայի ծրագրին համեմատ, և 1880 թ. սեպտեմբերի 7-ին տրուած հաւաքական ծանուցագրի հիման վրայ։ Ամենից վեր դասելով հանգերձ այդ չորս որոշ ռէֆօրմները, մենք չենք ուզում ասել, թէ անպայման և յատկապէս այդ չորսի վրայ ենք կանգ առնում. մեր փափագն է միայն իրագործուած տեսնել մեր վերջին նպատակը, և դա է՝ Տաճկական կառավարութեան ներքոյ ապրող քրիստոնէից գոյքի, կեանքի, կրօնի և պատուի լիակատար ապահովութիւն։ (Հաւանութիւն)։ Ի նկատ առնելով մեր երկրի յանձն առած բարոյական մեծ պատասխանատուութիւնը, մենք իրաւունք ունինք սպասելու, և Անգլիայի հասարակաց կարծիքն էլ պահանջում է, որ Անգլիան անէ առաջինն և գլխաւոր քայլը վերոյիշեալ նպատակն իրագործելու համար։ (Հաւանութիւն)։ Իսկ գալով գործնական միջոցներին, մենք չենք ուզում որևէ բան թելադրել կառավարութեան և կամ արտաքին գործոց նախարարութեան, վասն զի հաւատացած ենք, որ ինչ կերպով էլ պէտք է գատուի նըպատակին հասնել,—արդեօք միայնակ միջամտութեամբ, թէ մի ուրիշ եւրոպական պետութեան հետ միանալով և կամ թէ երկուսի կամ երեքի միահամուռ գործակցութեամբ,—կարևորն այն է, որ գործողութիւնը կատարուի և նպատակին հասցնէ։ Ինչ միջոցների էլ դիմելու լինի կառավարութիւնը գիտուած վախճանին ժամանելու համար, անհրաժեշտ է, որ նա արագ ու զօրեղ կերպով գործ տեսնէ և աչքի առջև ունենայ իսկոյն մըտցնել այնպիսի հաստատուն ռէֆօրմներ, որոնք ընդ միշտ ապահովեն հայաստանի բարուք վիճակը, հաւատացած լինելով, որ այս գործում նա մեր բոլոր ազգի կողմից ամենաջերմ աջակցութիւն կը գտնէ։ (Հաւանութիւն)։ Միլօրդ, այս մտքերը ձեզ յայտնելու համար է, որ մենք եկել ենք այստեղ. և դեռ շատերը կը գային, եթէ համոզուած չլինէին, որ պատգամաւորներիս ներկայութիւնն էլ արդէն հերիք է ընդհանուր բաղձանքների ճիշդ թարգման լինելու։ Յառաջ քան թէ հրաւիրէի միւս ջենտլմէններին խօսք ուղղել դէպի ձեզ, քաղցր է ինձ ասել, որ պատգամաւորութեանս համակրանք յայտնող ուրիշ բազմաթիւ նամակների հետ՝ նամակներ ստացուած են և Րօչեստրի եպիսկոպոսից, Հէրֆորդի եպիսկոպոսից, կարդինալ Վօգանից, լորդ Էդմունդ Ֆիցմօրիսից (Նախագահ Անգլօ-հայկական Ընկերութեան Չէշիրի ճիւղի), լորդ Հօբհուզից, սէօր Ջօն Ռօբինզօնից, սէօր Ջօն Կէննաուէյից, սէօր Էդմունդ Րուսէլից և Պարլ. անդ. սէօր Չարլզ Դիլքայլից։ (Հաւանութիւն)։

Կանոն Գօրն ասում է, թէ կառավարութիւնը յօգուտ հայերի արագ և վճռական գործ տեսնելիս՝ անգլիական ազգի մեծագոյն մասի համակրութիւնը իւր կողմը կ՚ունենայ։ Նա կարծում է, որ եթէ հիւպատոսական տեղեկագիրները հրատարակուին, նրանք շատ կը պարզեն խնդիրը։ Նա վստահ է, որ շատերը մեծապէս կը մխիթարուին, եթէ կառավարութիւնը բացարձակ յայտարարէ, թէ լիովին ճանաչում է մեր ազգի որոշ պարտքը հայերի նկատմամբ, նա կը ցանկանար աչներև կացուցանել, որ պատգամաւորութեան ձգտումն է՝ ոչ այնքան պատժել մասնաւոր մեղապարտներին, ինչքան որ նորոգուած տեսնել հայաստանի վարչութիւնը այնպիսի սկզբունքներով, որոնք ընդ միշտ ապահովեն հայերի իրաւունքներն ու պատիւը։ Նա կարծում է վերջապէս, թէ մեր կառավարութիւնը, ՚ի նկատ առնելով, որ Բ. Դուռը յապաղում է Բեռլինի դաշնագրութեամբ տուած խոստումը կատարել, հարկ կը համարէ վստահեցնել մեզ, թէ կ՚անէ, ինչ որ միայն անհրաժեշտ է, որպէս զի այդ խոստումը իրօք և անթերի կատարուի։ (Հաւանութիւն)։

Պրօֆեսօր Ագար Բիտը կարդում է

ածն թէ ինչ է մամուլի ներկայացուցիչների կոչումը. ամենասրբազան, ամենաբարձր կոչում, որ կարող է ունենալ մահկանացուն։ 19-երորդ դարում, երբ ի նախատինս մարդկութեան մամուլը դեռ հալածվում է, երբ մամուլի իսկական առաջնորդները խարդաւանանքների զոհ են լինում, այդպիսի մի ժամանակ լըսվում է հոգևոր բարձր Պաշտօնէի ձայնը, թէ առաքեալների և մարգարէների կոչումն է հրապարակախօսների, մամուլի կոչումը։ Ուրեմն յանցաւոր է, արժանի է նախատինքի ամենայն մի ձեռ, որ արգելք կը լինի մամուլին՝ «տարածել յառաջադիմութեան գաղափարներ, լոյս մըտցնել կեանքի շերտերի մէջ, ձգել բարւոյ, խաղաղութեան և եղբայրական սիրոյ սերմեր մարդկանց սրտերում»։

Ինչպէս յայտնի է մեր դարում մարդիկ իրենց կեանքի չարիքների մի մասը վերագրում են նաև գիտութեան, մինչ այն աստիճան, որ նոյն իսկ հրապարակախօսներ, երևելի հեղինակներ, փիլիսոփաներ իսկ երևեցան և կան այժմ, որոնք պատերազմ են յայտնում գիտութեան և լուսաւորութեան և ցանկանում են մարդկութիւնը վերադարձնել իր նախնական դրութեան. բայց այսօր հայ եկեղեցու ամենաժողովրդական Պաշտօնեան մի ուժգին հարուած է տալիս խաւարամտութեան և յուսահատ թուլութեան և Իր հզօր ձայնը լսեցնում է յօգուտ լուսաւորութեան, գիտութեան և յառաջադիմութեան։

Յիշեցնելով մարդկութեան, թէ ինչ է նրա համար մամուլը, Նա միևնոյն ժամանակ ցնցում է այդ մամուլին, որ նա չվարանի ժամանակի ոգով և իր սրբազան դրօշակը չիջեցնի մինչև «օտար կուռքերի անարժան ծառայութիւնը»։

Հայոց ազգի Կաթողիկոսը մամուլը բարձրացնում է մինչև առաքելական եկեղեցու բեմի վեհութիւնը և այնտեղ է դասում նրան. այդ ամենամեծ վարձն է մամուլին, այդ ամենամեծ ընծան է, որ 19-րդ դարում կարող էր ստանալ մամուլը. բայց նա արժանի չի լինել այդ ընծային, այդ վարձատրութեանը, եթէ անարժանօրէն ծառայէ օտար կուռքերին։

Ով ականջ ունի լսելու, թող լսէ, որովհետև այդ տեսակ խօսքերը՝ և այն էլ այդպիսի բարձրութիւնից միայն արտասանվում են դարերի ընթացքում մի անգամ իբրև ձայն հանճարի։ Թող այդ խօսքերն իբրև լուսաւոր ջահեր լուսաւորեն հայ մամուլի ճանապարհը, որ նա չխարխափէ խաւարի մէջ, որ նա առաքելաբար կրէ իր խաչը և չդաւաճանէ ճշմարտութեան։ Ս. Հ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏ ՄԿՐՏԻՉ I ԽՐԻՄԵԱՆԻ ԿԱՐԾԻՔԸ ՄԱՄՈՒԼԻ ՄԱՍԻՆ։

Վեհափառ Հայրապետը Բոստոլում ի միջի այլոց ընդունելով նաև տեղական մամուլի ներկայացուցիչներին հետևեալն է ասել մամուլի մասին.— «Հին ժամանակները — ասաց Վեհափառ Հայրապետը — կային առաքեալներ և մարգարէներ, որոնք մարդկանց սովորեցնում էին առաքինութիւն և ազդու խօսքով նախազգուշացնում էին ժողովրդին նրանց գլխին գալիք դժբախտութիւններից։ Այժմ ոչ առաքեալներ կան և ոչ մարգարէներ, և այն՝ ինչ որ նրանք էին անում, բաժին է դարձել լրագրական և օրագրական գործիչներին։ Մամուլը, որ միշտ հզօր է, առանձին ոյժ է ստացել այն ժամանակից, երբ շնորհիւ գործադրական գիտութեանց վերին աստիճանի զարգացել են յարաբերութիւնները բոլոր երկրների մէջ։ Հեռագրի, հեռախօսի, երկաթուղիների և մարդկային հանճարի ուրիշ գիւտերի շնորհիւ լրագրական նոյն տեղեկութիւնները մի օրում ամբողջ ընդարձակ աշխարհի քաղաքակրթեալ ազգերի ընտանիքի սեպհականութիւն է դառնում։ Այսպիսի պայմանների մէջ՝ խելացի, իմաստուն ուղղութեամբ, իսկական քրիստոնէական ոգով տոգորուած տպագրական խօսքը կատարելապէս կարող է անսահման օգուտ պատճառել մարդկանց, լուսաւորել հասարակական ինքնաճանաչութիւնը, տարածել յառաջադիմութեան գաղափարներ, գիտութեան լոյս մըտցնել կեանքի շերտերի մէջ, ձգել բարւոյ, խաղաղութեան ու եղբայրական սիրոյ սերմեր մարդկային սրտերում։ Այս մտքով մամուլը, անկախած կենսատու, ստեղծագործիչ ու բարերար ոյժ է, և նրա մէջ գործող անձանց պարտականութիւնները սուրբ են։ Բայց եթէ, ընդհակառակն, այդ ոյժը ստանում է կործանիչ յատկութիւն, հէնց որ սկսում է շեղուել իր ուղիղ ճանապարհից, այն ժամանակ նրա արժանաւոր դրօշակն ու նրա բարձր կոչումն փոխվում է և նրան փոխարինում է օտար կուռքերի անարժան ծառայութիւնը»…։

ՊԱՐԼԱՄԵՆՏԻ ՆԻՍՏ

Ապրիլի 1-ի նիստում գնդապետ Նօլանը հարցնում է Արտաքին գործոց նախարարի օգնականին, թէ անգլիական դեսպանը Կ. Պօլսում պահանջե՞լ է և կամ թէ հրահանգ ստացե՞լ է պահանջելու Բ. Դռնից այն ամեն սպաների և զինուորների անուանական ցուցակը, որոնք գըտնուել են հայ կանանց և մանկանց, ինչպէս ասում են, զարհուրելի կոտորածի վայրերում. և արդեօք պիտի պահանջուի Բ. Դռնից արգելել այդ սպաների ու զինուորների փախուստը, մինչև որ անձնական պատասխանատուութեան չափը լիովին հետազօտուի։

Միստր Զուէննը հարցնում է — արդեօք կառավարութիւնը մտադիր չէ՞ հրահանգ տալ Պօլսի անգլիական դեսպանին, որպէս և Քրնիչ Կօմմիսիայի անգլիական նուիրակին՝ ուշի ուշով ստուգելու, թէ արդեօք վերոյիշեալ հարցի մէջ յիշուած սոսկալի գործերը կարգադրելու և գլուխ բերելու հրամանը ուղղակի Բ. Դռնից չէ՞ր տրուած սպաներին, ինչպէս որ հէնց այսօր հաւատում են քաջ լրացեալ անգլիական թերթերի հայաստանի թղթակիցները։

Սեր Էդ. Գրէյը ժամանակ է խնդրում տեղեկութիւն հաւաքելու այդ վերջին հարցի մասին, որ նա չգիտէր թէ կ'առաջարկուի։ Ի պատասխանի մեծարգոյ և ազնիւ անդամի հարցման նա ասում է, թէ Կ. Պօլսի դեսպաններն անդադար հետևում են Կօմմիսիայի գործունէութեան, և կարող է միայն կրկնել, թէ նրանք ոչ մի ջանք չեն խնայել, որպէս զի քննութիւնը նուիրակների միջնորդութեամբ էական լինի և նրա արդիւնքը՝ բաւարար։

—

«The Daily News»-ի Կ. Պօլսի թղթակիցը հեռագրում է այդ լրագրին ապրիլի 1-ից.

Բ. Դուռը մշակել է ռէֆորմների մի ծրագիր, որ առաջարկելու է պետութիւններին։ Ծրագրի էականը սրանք են. Երկու կամ երեք նահանգներ կը միացուին մի կամ երկու կառավարչապետի վարչութեան ներքոյ։ Նրանց կ'ենթարկուին իրաւաբանական արքունի դպրոցում ուսումն աւարտած տասնըհինգ հայ երիտասարդներ, որպէս կայմակամներ, և տասն թիւրք, իբրև միւթէսէրրիֆներ։ Լուր կայ, թէ կառավարչապետ կը լինի կամ Թուրխան փաշան և կամ Ս. Պետերբուրգի նախկին դեսպան Շաքիր փաշան։ Իսկ Հօլց փաշան, որ Բ. Դռան ծառայող մի բարձրաստիճան գերմանացի պաշտօնեայ է, ընտրուած է, ասում են, մի ժանդարմերի կազմելու, որ բաղկացած կը լինի քրիստոնեաներից և մուսուլմաններից։ Այդ ծրագիրը կ'առաջարկուի պետութիւններին, որոնք դրան հաւանութիւն տալուց և կամ փոփոխելուց յետոյ կ'որոշեն, թէ ինչ միջոցներով պէտք կը լինի ապահովել ռէֆորմների իրագործումը։

Բրիտանական դեսպանատնից յայտնուած էր հայոց Պատրիարքին Սուլթանի դիտաւորութիւնը արձակելու բանտարկուած հայ հոգևորականներին. սակայն մինչև այս օրս Պատրիարքը ուրիշ ոչ մի տեղից այդ մասին մի հաւաստիք չէ ստացել։

—

«Daily Chronicle»-ի ասելով, մայիսի 7-ին մի մեծ միտինգ պիտի գումարուի հայկական հարցի առթիւ։ Միտինգին մասնակցելու են բազմաթիւ պատգամաւորներ Անգլիայի ամեն կողմերից, ինչպէս որ արել էին բուլղարական նախճիրների առթիւ հաւաքուած աչագին միտինգի ժամանակ։ Միտք կայ առաջարկել նախագահութիւնը նախ և առաջ միստր Գլադստոնին։

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

(Առաջնորդող „Պետ. Վեդ.“ լրագրի № 81.)

Ինչ վերաբերում է մասնաւորապէս հայոց խնդրին և Անգլիայի յարաբերութեան Տաճկաստանի հետ, Օսմանեան կայսրութեան բարեկամները՝ որոնց թիւը կարճ ժամանակ առաջ մեծ էր, յուսահատութեամբ, [illegible] են շարժում։ Այն ամենը, ինչ որ «Daily News»-ի և «Daily Telegraph»-ի էջերում բաց և գեղեցիկ գոյներով գրւում էր հայկական սարսափների մասին, վերջին օրերը բոլորն էլ լուրջ, մանրամասն և փաստօրէն հաղորդագրութեամբ Փօքր-Ասիայից հրատարակուեցաւ «Times»-ի էջերում։

«Daily News»-ին կարելի էր կասկածել անհամբերութեան մէջ դէպի ամեն ինչ տաճկականը, «Daily Telegraph»-ը չնայելով իր ճշմարտասիրութեան, ձըգտում է փայլել տպաւորութիւն գործող նորալուրերով և տեղեկութիւններով։ Բայց երբ «Times»-ը նրանց «ամէն» է ասում և այն հիմնուած փաստերի վերայ, որոնք ուղարկած են խմբագրութեան դեռ յունվարին, այնուհետև կարելի է կարծել, որ Բ. Դռան հերքումներին շատ սակաւ հաւատ ընծայող կը լինի։ Հակառակ դէպքում «Times»-ը, որ աւելի տրամադիր է Տաճկաստանը դաշնակից պետութիւն համարելու, առանձին բաւականութեամբ կը հերքէր Տաճիկների հայաստանում գործած գազանութեանց լուրերը, որոնք նուաղեցնում են դաշնակից պետութեան, Բ. Դռան կշիռը։ Ինչպէս ասած է «Times»-ի առաջնորդող յօդուածում, բոլոր տեղեկութիւնները այդ ազդեցիկ լրագրի խմբագրութեան հաղորդած է մի պարզ մարդ, առանց կրթութեան. նա չունի ոչ գրական հանճար և ոչ էլ հրապարակախօսի փորձառութիւն, բայց լաւ ծանօթ է մարդոց և տեղական կեանքի պայմաններին և պատմում ու նկարագրում է պարզ ոճով առանց գոյն տալով, մեծ զգուշութեամբ, իբրև մարդ, որ գիտէ, թէ ինչ պատասխանատուութիւն կայ նորա վրայ։ Նա հաստատում է գլխաւոր գծերում այն սարսափելի եղեռնագործութիւնները, որոնք իր ժամանակ հրատարակուեցան այլ լրագրերում և միևնոյն ժամանակ ապացուցանում է, որ Սուլթանի հեղինակութիւնը չէ կարող չշօշափուել, որովհետև արիւնհեղութեան և ամեն բնակիչների սպանութեանց հեղինակները նորա՝ Սուլթանի մէջ գտան զօրեղ պաշտպանութիւն Կ. Պօլսում։ «1877 թուականին ասած է վերջաբանում, Բ. Դռան յաջողեցաւ մեծ պետութեանց մեղադրութիւնների դէմ պաշտպանել տաճիկ մարդասպաններին, կրակ գցողներին և Բուլղարական գազանութեանց հեղինակ երկու Աշմետներին, Բոսուն-Բէյին, Սալիդ Աղային և Չէֆիքէ-փաշային։ Բայց այս անգամ, անտարակոյս, կը դժուարանայ Բ. Դռան այդ յաջողութիւնն ունենալու։

Ինչպէս մենք արդէն ասացինք, այդ յօդուածի «Times»-ի մէջ հրատարակուելը համարվում է նշանաւոր քաղաքական դէպք։ Անգլիայում ցանկանում են, ինչպէս երևում է, լրջութեամբ հերթական դնել հայկական խնդիրը և լորդ Կիմբերլէյի՝ քաղաքագիտական արշաւանքը չի յապաղիլ հանդէս գալու։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻՑ հաստատ աղբիւրներից հաղորդում են անգլիական լրագրներին, թէ օսմանեան կառավարութիւնը պատրաստել է հայաստանում մտցնելիք բարեփոխութեանց ծրագիրը, որ և մտադիր է առաջարկել պետութիւնների քննութեան։ Այդ ծրագրով հայկական այն գաւառները, ուր անկարգութիւններ են եղել, պիտի միացուեն մի ընդհանուր նահանգապետի իշխանութեան տակ, որին իբրև օգնականներ կը նշանակուեն տասն և հինգ հայ և տասն տաճիկ աստիճանաւորներ։ Ընդհանուր նահանգապետի թեկնածուներ անուանում են Թուրքա-փաշային՝ Կրետէի նախկին նահանգապետին, և Պետերբուրգի նախկին օսմանեան հիւպատոս Շաքիր-փաշային։ Ժանդարմերիան պիտի կազմակերպուի կիսով չափ մահմեդականներից և պիտի յանձնարարուի Ֆօն-Դեր-Հօլց փաշային։

***

ՎԻԵՆՆԱՅԻՑ հեռագրում են «Daily News»-ին, թէ հայ եպիսկոպոսները Բ. Դռնից պահանջում են ազգային ժողով հաստատել Հայաստանի համար, որ պիտի հսկէ հայկական գաւառների կառավարութեան վրայ։

***

ԼՕՆԴՕՆԻՑ գրում են, որ ապրիլի 7-ին Սէնտ-Ջէմս-Հոլլում տեղի կ'ունենայ մեծ ժողով հայկական հարցի առթիւ։ Գլադստոնը յանձն է առել նախագահել այդ ժողովին և ճառ խօսել։

***

ՆՈՐ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ մեզ հեռագրում են մարտի 30-ից.

«Այսօր, Աւագ Հինգշաբթի, Նորին Վեհափառութիւնը հանդիսաւոր կերպով կատարեց ոտնալուայի հանդէսը Սուրբ-Լուսաւորիչ եկեղեցում։ Աղօթողների աչագին բազմութիւն կար. Վեհափառ Հայրապետը հիանալի քարոզ խօսեց։ Նորին Վեհափառութիւնը կատարելապէս առողջ է»։

***

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻՑ հեռագրում են «Նով. Օբ.»-ին, թէ «Նով. Վր.»-ի ասելով Ներքին գործոց նախարարը ներկայացրել է պետական խորհրդին մի ծրագիր, որով առաջարկվում է լիակատար [illegible], իսկ միւս քաղաքներում պիտի մտցնուի սահմանափակ ինքնավարութիւն։

***

ՇՈՒՇԻՑ մեզ գրում են. — Մարտի 10-ին, երեկոյեան, Նոր-Նախիջևանից Կա-

---

ամսոյ 27-ին Բիրմինգամում կայացած Աւետարանական ազատ եկեղեցու կոնգրէսի որոշումը, որ հետևեալն է.

«Աւետարանական ազատ եկեղեցիների կոնգրէսը, 'ի նկատ առնելով թիւրք զինուորների և ուրիշ ձեռքով անպարտ հայերի՝ հայ մարդոց, կանանց և մանկանց դէմ գործուած անգթութիւնները, ցաւումն է յայտնում, որ թիւրք կառավարութիւնն այդպէս դրժել է Բեռլինի դաշնագրի հանդիսաւոր խոստման, և խնդրում է Վեհափառ Թագուհու կառավարութեան՝ անել ինչ որ անհրաժեշտ է այդ դաշնագրով Թիւրքիայի հայերին խոստացած հովանաւորութիւնն ապահովելու համար։ Կոնգրէսը յայտնում է նմանապէս, թէ կառավարութեան պարտքն է ներկայացնել անգլիական ազգին, որ կապուած է դաշինքներով և հիւպատոսներ ունի Հայաստանում, այդ հիւպատոսների պաշտօնական զեկուցումները»։ Ատենախօսն ակնարկում է այդ որոշումն անող կոնգրէսի փոխանորդական բնաւորութեան վրայ (representative character)։ Դա կազմուած էր Նոնկօնֆորմիստ եկեղեցիներից, որոնք միացել էին միաբան գործառնութեան համար, և նրա որոշումը բոլոր անգլիական նոնկոնֆորմիստների կարծեաց արտայայտութիւն է։ Ատենաբանը իր կողմից ևս խնդրում է, որ հիւպատոսական զեկուցումներն անպատճառ հրատարակուեն։

Դոկտոր Կլիֆֆորդը նմանապէս շեշտում է Բիրմինգամի կոնգրէսի արած որոշման կարևորութիւնը, որովհետև անձամբ կցորդ է այդ եկեղեցիներից շատերի հետ։ Նա կարող է վկայել, որ այդ եկեղեցիները լիովին համոզուած են, թէ Հայաստանում պատահած կոտորածի մասին շրջող լուրերն էապէս ճշմարիտ են։ Ապացոյցներն այնքան պարզ են, որքան որ աչառելի է նոյն իսկ դէպքը։ Նա շատերից լսած է, թէ չեն կարող ուշի ուշով կարդալ լրագիրների հաղորդած այդ դէպքերի մանրամասնութիւնները — այնքան դրանք սոսկալի են։ Եկեղեցիները պահանջում են, որ հիւպատոսական զեկուցումները հրատարակուին. Նրանք վստահ են, որ այդ զեկուցումները ոչ մի կերպով չեն թուլացնիլ Թիւրքիայի դէմ վարուող դատը։ Նրանք համոզուած են, որ Սուլթանն արդարութիւն չի անիլ, մինչև որ նրան չստիպեն, և լիայոյս են, թէ լորդ Կիմբերլէյի միջամտութեամբ Հայաստանին մի աւելի լաւ վարչութիւն կը տրուի։ (Հաւանութիւն)։ Ատենախօսը հաւաստի է, որ Միացեալ-Նահանգներում էլ նոյն ջերմ զգացմունքն է տիրապետում այս խնդրի նկատմամբ, ինչպէս և Անգլիայում։ (Հաւանութիւն)։

Կանոն Ուիլբերֆօրսն ասում է, թէ քրիստոնեայ մարդու և քրիստոնեայ ազգի առաջին պարտաւորութիւնն է օգնել այն ազգերին, որոնք զոհւում են, բայց օգնող չունեն։ Մեր մեծ ազգն ուրացած կը լինի իր պարտքը, եթէ անմիջապէս մի ազդու գործ չկատարէ հայ քրիստոնեաներին օգնելու համար։

Էյթօն երէցը խօսում է ոչ միայն իբրև մի հոգևորական անձն, այլ և որպէս անգլիացի, թէ անհրաժեշտ է ընդ միշտ վերջ դնել այն դէպքերին, որոնց լոկ նկարագիրն անգամ եռ է բերում մարդուս արիւնը։ (Լսեցէք, լսեցէք)։ Շատ բան է լսել այդ դէպքերի մասին։ Կային մարդիկ, և բաւական բազմաթիւ, որոնք չէին հաւատում այդ դէպքերի պատմութեան։ Բայց նրանց թերահաւատութիւնն արդէն անցաւ, որովհետև ոչ ոք չէ կարող կարդալ ականատես վկաների այն փաստերը, որոնք հրատարակուած են «The Daily News»-ում և այս օրուայ «Times»-ում, և չզգալ որ այլևս կասկածելու հնար չկայ։ Թերահաւատութեան ժամանակն անցաւ և մնաց միայն անգլիական ազգի պարտքը՝ ամենայն պիսի միջոցներ գործ դնելու, որ յիշեալ կոտորածներն այլ ևս երբէք չկրկնուին։ (Հաւանութիւն)

Սեր Ջորջ Սիտուէլ՝ Պարլ. անդամն ասում է, թէ Անգլօ-հայկական ընկերութիւնը մինչև այժմ աշխատել է աւելի զսպել, քան թէ գրգռել հասարակաց կարծիքը։ Այժմ արդէն հնար չկայ չհաւատալու կոտորածներին և հրատարակուած զեկուցումների ճշմարտութեան։ Ատենախօսը կարծում է, թէ Անգլիան պիտի ամեն մի հնարաւոր միջոց գործ դնէ անգթութեան և հալածման դէմ, մանաւանդ այն պատճառով, որ պարտաւոր է այդպէս անել դաշնագրերի զօրութեամբ։ Դեռ մի քանի օր առաջ մենք վաւերական ապացոյց չունէինք կոտորածների մասին։ «The Daily News»-ը, «Times»-ն և «The Daily Telegraph»-ը հրատարակեցին ամենասոսկալի պատմութիւններ, որոնց լիակատար հաւատ են ընծայում այդ մեծ թերթերը։ Սակայն որքան էլ ճիշտ և ստոյգ լինեն այդ պատմութիւնները, դարձեալ չեն կարող այն աստիճան վաւերական լինել, որքան որ են հիւպատոսական տեղեկագիրները, հետևաբար անհրաժեշտ է, որ դրանք դրուին Պարլամէնտի սեղանի վրայ։ Այդ թերթերը կարդացող իւրաքանչիւր մարդ արդէն կազմել է մի որոշ համոզմունք, և եթէ պաշտօնապէս էլ հաստատուի, որ նրանց հաղորդածը ճշմարիտ է, այն ժամանակ Կառավարութիւնը հարկաւ կըփութայ ապահովել հայերի կեանքը, գոյքն ու պատիւը։ (Հաւանութիւն) Պարլ. անդ. սեր. Ջօզէֆ Պիզը, Պ. ա. միստր Զուէննը, Պ. ա. սեր Ջ. Կարմիշէլը, Պ. ա. միստր Չաննինգը, գեր. հայր Ջ. Լանը (հռոմէական կաթոլիկ) և ուրիշները, նմանապէս դիմեցին Արտաքին գործոց նախարարին, առանձին փափագ յայտնելով, որ Մուշի քննութիւնը ճշմարիտ լինի և բանի բուն էութիւնը յերևան հանէ։

Լորդ Կիմբերլէյը, որին հաւանութեան նշաններով ողջունեցին, պատասխանեց. Առաջին բանը, որ ուզում եմ ասել այն է, ինչ որ սեր Ջօզէֆ Պիզն բարի եղաւ ինձնից առաջ ասելու, այսինքն թէ ես ջերմ սրտով համակրում եմ ձեզ։ (Լսեցէք, լսեցէք)։ Կարիք չունիմ երկարօրէն բացատրելու համակրանքիս պատճառները։ Իմ վիճակը ձեզ յայտնի է, և դուք անշուշտ կըհաւատաք, որ ես էլ կցորդ եմ հայրենակիցներիս զգացմունքին — (Լսեցէք, լսեցէք) — և եթէ այնպէս սաստիկ չխօսեմ, ինչպէս որ արին մի քանի ջենտլմեններ, պատճառն այն կը լինի, որ իմ դիրքը շատ դժուար է և պատասխանատու և ստիպում է ինձ վերին աստիճանի չափաւոր լինել խօսքերի մէջ։ (Լսեցէք, լսեցէք) Այս ասելուց և յուսամ՝ հաւատալուց յետոյ, թէ ես մի հաստատուն, ջերմ և զօրեղ համակրանք ունիմ դէպի պատգամաւորութիւնը, կըցանկամ շօշափել ատենախօսների ակնարկած կէտերից մի քանիսը։

ՌԷՖՈՐՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Նախ և առաջ կ'անցնեմ Սասունի գործով զբաղուած քննութեան։ Ինձ հարցրին, թէ արդեօք կառավարութիւնը որոշել է ամենայն հնար գործ դնել, որ այդ քննութիւնը լինի մի արդար, ճշմարիտ և լիակատար քննութիւն։ Եւ այդ կ'ասեմ, որ ամեն հնարաւոր միջոց գործ է դրուած և պիտի գործ դրուի, որ քննութիւնն արդար լինի և իրական։ (Հաւանութիւն)։ Ցանկութիւն յայտնուեցաւ, որ քննութիւնը հնար եղածին չափ եւրոպական լինի։ Կարծեմ որ այդ բանն արդէն ապահոված է, գոնէ այն չափով, որ մեր յատուկ նուիրակը և միւս երկու շատ նշանաւոր բարեկամ պետութեանց, այն է Ֆրանսիայի և Ռուսաստանի նուիրակները ներկայ են Կօմմիսիայի մէջ և ձեռնհաս կը լինեն ջոկ ջոկ և անկախ զեկուցումն տալ (Լսեցէք, լսեցէք)։ Հետևաբար կարող ենք, կարծեմ, վստահ լինել, թէ քանի որ այդ երեք նուիրակների ներկայութիւնն ապահոված է, քննութիւնը ոչ միայն թիւրքական կը լինի, այլ մասամբ իւիք եւրոպական։ Սակայն շատ ուղիղ կերպով նկատուեցաւ, որ այդ քննութիւնը, գործ ունենալով Թիւրքիայի միայն մի մասում պատահած աղէտալի դէպքի հետ, դեռ չի պարզիլ մեզ զբաղեցնող ամբողջ հարցը։ Միստր Ստեվնսընը շատ չափաւոր, շատ արդար և իմաստալի նկատողութիւններով ներկայ բանակցութիւնն սկսելիս՝ ասաց, թէ մեզ պէտք է աչքի առջև ունենալ ապահովել հայերի կեանքը, ստացուածքը, կրօնն ու պատիւը։ Չեմ կարծում, որ կարելի լինի աւելի պարզ որոշել խնդիրը, քան թէ այդ խօսքերով։ (Լսեցէք, լսեցէք)։ Այդ է այն էական բանը, որ մեզ պէտք է աչքի առջև ունենալ։ Պէտք չէ հարկաւ աչքաթող անել անգթութեանց հեղինակներին, երբ որ նրանք յերևան հանուեն։ Սակայն գլխաւորն այն է, թէ ինչ պէտք է անել, որ անգթութիւնները չկրկնուին, և աւելի քան թէ այդ՝ ինչ պէտք է անել, որ մի մշտական դարման արուի։ (Լսեցէք լսեցէք)։ Այդ է կարևորը, և ես հարկ եմ համարում ասել, թէ սեր Ֆիլիպ Կերրին, որի ջանքերն այս բոլոր գործի մէջ ամեն գովասանքից վեր են, հաւաստել է ինձ, թէ իր ընկերները, այն է՝ Ֆրանսիայի և Ռուսաստանի դեսպանները լիովին համոզուած են ռէֆորմի անհրաժեշտութեան մասին։ (Լսեցէք, լսեցէք)։ Ըստ իս այդ մի շատ էական բան է, և ես հաւատացած եմ, որ երբ ժամանակը հասնի, նրանք լուրջ և ջերմ կերպով կ'աջակցեն մեզ, ինչպէս որ աջակցեցին Մուշի քննութեան գործում։ (Լսեցէք, լսեցէք)։ Ատենախօսներից շատերը խոստովանում են, որ այս հարցը վերին աստիճանի դժուար պարագաներով շըրջապատուած է։ Դժուարութիւններն անբաւ յարուած են նոյն իսկ հարցին։ Նախ և առաջ պիտի յիշէք, որ հայաստան ասելով պէտք չէ հասկանալ մի երկիր, որի բնակիչները բացառապէս հայեր լինէին։ Դա Ասիական Թիւրքիայի մի մասն է, որ սովորաբար և ընդհանրապէս կոչվում է Արմենիա, ուր բազմաթիւ հայեր կան և շատերը խիտ առ խիտ բնակուած. սակայն այնտեղ կայ և շատ բազմաթիւ մահմեդական ժողովուրդ, և մի քանի գաւառներում դա է մեծամասնութիւն կազմողը։ Բացի այդ —կան հայկական համայնքներ, որոնք ցրուած են թիւրքաց պետութեան ամբողջ ասիական մասում՝ տեղ տեղ ոչ շատ բազմաթիւ, բայց միշտ արժանի համակրութեան, որոնց գործը նմանապէս հարկաւոր է ի նկատ առնել։ (Լսեցէք, լսեցէք)։ Այս խնդրի դժուարութիւնը լաւ յայտնուեցաւ, ինչպէս որ նկատեց և ատենաբաններից մէկը, մի քանի տարի առաջ արուած միաբան ազգարարութեան դրժելովը կամ թէ ապարդիւն մնալովը, —ազգարարութեան, որ արել էին դաշնակից պետութիւնները։ Յիշեցէք, որ այս բոլոր խնդրի մէջ մի ծանր դժուարութիւն կայ, նոյն իսկ մի վտանգաւոր քաղաքական հարց, որ պէտք չէ անտես անել։

ՖՐԱՆՍԻԱՅԻ և ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԻՒՆԸ

Կարծեմ միստր Չաննինգն էր, որ շատ իրաւացի կերպով նկատեց, և ես ուրախութեամբ լսեցի, թէ մենք մտադիր չենք Արևելեան կոչուած խնդիրը յարուցանել։ Գլխաւոր վնասի կէտերից մէկը հէնց այն է, թէ ինչպէս ձեռք բերենք բոլորիս փափագած արդիւնքը՝ առանց սուր կերպով յարուցանելու Արևելեան խնդիրը։ Իմ գործը չէ պաշտպանել, թէ ինչ է արուած նախորդ տարիներում, երբ որ ես մասնաւորապէս պատասխա-

բայետ եպիսկոպոս Այվազեանը հեռագրեց, որ հայր Կիւրեղ եպիսկոպոս Սրապեանը վախճանուեց։ Այդ հեռագիրը կայծակի արագութեամբ տարածուեց քաղաքումս. Ամենքը ցաւում էին, որ հայոց եկեղեցին կորցրեց իր հարազատ, անկաշառ պաշտօնեան։ Այդ հեռագիրը ստանալով բարձրապատիւ հայր Գարեգին վարդապետ Սաթունեանը, իսկոյն կարգադրեց, որ հետևեալ օրը հոգեհանգիստ կատարուի։ Մարտի 11-ին Ագուլեաց մայր եկեղեցում ներկայ էր խուռն բազմութիւն, նոյնպէս ներկայ էր թեմական դպրանոցի տեսուչը, ուսուցչական խումբը բոլոր աշակերտներով, օրիորդաց դպրոցի աշակերտուհիները իրենց ուսուցիչներով և վարժուհիներով։ Ս. պատարագից յետոյ՝ հոգևորականութիւնը հոգեհանգիստ կատարեց։ Հոգեհանգստի վերջին պ. Ստեփաննոս Կանայեանցը մի ազդու ճառ խօսեց, որի մէջ նկարագրելով հանգուցեալ Սրբազանի կեանքը, ցաւ յայտնեց, որ հայերս մի մեծ հարուած կրեցինք, որ այսօր կորցնում ենք մի արժանաւոր հովիւ, մի անկաշառ, արդարամէր, ողորմած՝ բուն աւետարանի ոգով սնուած, մեծացած, բարոյականութեան քարոզիչ։

* * *

† ԻՇԽԱՆ Ձ. Ա. ՋՕՐՋԱՁԷ

—

Թիֆլիզում մի տխուր լուր է ստացուել որ Պետերբուրգում վախճանուել է Ձ. Ա. Ջօրջաձէն—Կովկասի ամենաեռանդուն գիւղատնտեսներից և արդիւնաբերութեան պիոներներից մէկը։ Իշխան Ջօրջաձէն առաջ զինուորական էր, աւարտել էր զինուորական ճեմարանը, բայց բնական կոչումը և գործունէութեան անսահման եռանդը նրան ստիպեցին թողնել զինուորական ծառայութիւնը, և հանգուցեալը դեռ երիտասարդ և լի եռանդով գնաց արտասահման, ուր երկար տարիներ ուսումնասիրում էր յատկապէս գինեգործութիւնը ոչ միայն բարձրագոյն դպրոցներում և լաբորատորներում, այլ շատ անգամ բանելով այգիներում իբրև հասարակ բանուոր։

Հիմնովին ուսումնասիրելով այն գործը, որին նուիրուել էր հանգուցեալը, վերադարձաւ Թիֆլիս և չնայելով, որ ինքը զուրկ էր նիւթական միջոցներից, շնորհիւ իր եռանդին և գիտութեանը կարողացաւ կարճ ժամանակում արդիւնաբերական ընկերութիւն կազմել «Ջօրջաձէ և Ընկ.» անունով, որի գլխաւոր կառավարիչն էր ինքը։ Կարճ ժամանակում հանգուցեալն այնպիսի ընթացք տուաւ ընկերութեան գործերին, որ նա իր բաժինները հաստատեց Մոսկվայում, Պետերբուրգում, Օդեսայում և ուրիշ մեծ քաղաքներում, և Կովկասեան առևտրական նշանաւոր տների հռչակ ստացաւ։ Իշխան Ջօրջաձէն իրեն ստեղծած գործը վարում էր ոչ իբրև մեծ տոկոսի սպասող մանրավաճառ, գինեվաճառ, այլ իբրև կատարեալ արդիւնաբերող, իբրև սիրահար գիւղատնտեսութեան և արդիւնաբերութեան այդ բառի եւրոպական մտքով։ Նրա գործունէութիւնը չէր սահմանափակւում գիներ գնելու և վաճառելու մէջ, այլ նա Կովկասեան գիւղատնտեսական ընկերութեան մէջ ամենաջերմեռանդ պրոպագանդիստներից էր, որ Կովկասեան բնութեան հարստութիւնները մշակուեն և հարստութեան աղբիւր լինեն ժողովրդի համար։ Նրա գլխաւոր ձգտումը և նպատակն էր ոչ թէ հարստանալ, այլ հարստացնել երկիրը և ազգաբնակութիւնը։ Գիւղատնտեսական ընկերութեան մէջ նրա արած զեկուցումները գինեգործութեան և այլ տնտեսական և արդիւնաբերական խնդիրների մասին միշտ հիացնում էին ընկերութեան ժողովներին ներկայ եղողներին իրենց բարեխղճութեամբ, հմտութեամբ և ճշգութեամբ։

Լինելով կատարելապէս կրթուած, ինտելիգենտ մարդ, անկեղծ նուիրուած երկրի շահերին, իշխան Ձ. Ջօրջաձէն, միևնոյն ժամանակ դրամատէր չէր, որպէս զի կարողանար իր ծրագրները իրականացնել, ուստի նա իր արդիւնաբերական ձեռնարկութեանց մէջ ընդհարումներ էր ունենում դրամատէրերի շահերի հետ և շատ անգամ տեսնում էր որ այդ շահերը կրծում են այն գործի արմատները, որին ինքն այնքան անկեղծութեամբ և եռանդով նուիրուած էր։ Մամոնայի ոյժը բարձր էր և կոպիտ, իսկ Ջօրջաձէի ազնիւ փափկութիւնն ընդունակ չէր այդ կոպիտ ոյժի հետ մրցել։ Երկրի շահերին նուիրուած, արդիւնաբերական ահագին ձեռնարկութեան հիմնադիր և կազմակերպող, եռանդուն և ազնիւ գործիչը մեռաւ հոգեկան հիւանդանոցում, իսկ հիմնած գործը չէ կրում այլ ևս նորա կնքած դրոշմը։

Իշխան Ջօրջաձէի մահը ծանր կորուստ է բոլոր Կովկասցիներիս համար, որովհետև նա մեր այն ազնիւ հայրենակիցներից էր, որոնք իրենց բոլոր կեանքը նուիրում են իրենց երկրի շահերին։

Հանգիստ ոսկերացդ, ազնիւ հայրենակից։

* * *

Կանանց բժշկական կուրսերի մասին «Ըժեդնեւ. պրակտ. մէդից.» հետևեալ տեղեկութիւններն է տալիս. «Այդ կուրսերը կարող են մտնել միայն այն կանայք, որոնք կը ներկայացնեն հասունութեան վկայական պետական միջնակարգ դպրոցներից։ Այժմ արդէն շատ ցանկացողներ կան այդ կուրսերը մտնելու, այդ պատճառով մտադրութիւն կայ թոյլ տալ որ կանայք կարողանան մտնել այն բոլոր համալսարանները, ուր բժշկական բաժին կայ»։ Նոյն շաբաթաթերթը հաղորդում է թէ կանանց կուրսերի բացումը տեղի կ'ունենայ առաջիկայ ուսումնական տարուայ սկզբին։

* * *

ԱԽԱԼՑԽԱՅԻՑ մեզ գրում են.—«Քաղաքիս աւագը, հաստատուած է իր պաշտօնում։ Մէջլիսի առապութիւնը վերացուած է և միացած քաղաքային աւագութեանը։ Քաղ.-աւագի հաստատուելուց յետոյ, տեղիս քաղաքային վարչութեան դահլիճում ժողով կայացաւ, ուր և որոշուեց քաղ. վարչութեան միւս ծառայողների վարձատրութիւնը։ Այնուհետև մարտի 11-ին և սրա շարունակութիւնը կազմող ժողովներում կայացաւ այլ և այլ պաշտօնատար անձանց ընտրութիւնը, նիւթ դարձաւ քաղաքի ել ու մտից հաշուի քննութիւնը, որ և աննշան փոփոխութեամբ հաստատուեց։ 'Ի միջի այլոց այդ ժողովների խորհրդածութեան առարկայ էր նաև հացի և մսի սակագնի որոշումը։ Մինչև առաջ հացի և մսի սակագնի որոշումը քաղ. վարչութեան իրաւունքն էր համարվում, ներկայ կանոնագրութեամբ այդ վերապահուած է քաղ. լիազօրաց ժողովին։ Լիազօրաց ժողովն սկզբում որոշեց մի մասնաժողով ընտրել հացի և մսի սակագնի համար, բայց որովհետև գործին ձեռնաս լիազօրները մասնաժողովի անդամ լինելուց հրաժարուեցան, ուստի և որոշուեց այդ կատարել ժողովով։

* * *

ԹԷՀՐԱՆԻՑ հաղորդում են մեզ հետևեալ լուրերը.—Պարոն Վահան Մեսրոպեանի գործի քննութիւնը կատարուեցաւ, ձերբակալուած սրիկաները խոստովանուեցան, որ իրենք կատարել են այդ վայրենութիւնը «Ղուզի» արտօնատէր Ընդրէաս Բէգնազարեանի թելադրութեամբ, այժմ գործը—յանձնուած է Ռուսաց դեսպանատան։

—Այս օր ժամանեց այստեղ առաջ. տեղապահ Գեր. Սահակ Ծ. Վ. Այվազեանը, ընդ միշտ այստեղ մնալու է իբր յաջորդ։ Թէհրանի հայ գաղթականութիւնը մեծ յոյսերով տոգորուած սպասում էր այդ օրուան։ Հաւանական է, որ պսակուի այս խեղճ ժողովրդի յոյսը, որովհետև Գեր. Հայրը ունի մի քանի գեղեցիկ յատկութիւններ և բարեմասնութիւններ, որոնց շնորհիւ գուցէ յաջողի պարզել մեր ազգ. վարժարանի գործերը։

Բաւական ստուար բազմութիւն հայերից ընդառաջեր էին հայր սուրբին քաղաքից դուրս։

—Ղազվինայ թաղի օրիորդաց վարժարանն արդէն փակուեր է, իսկ տղայոցը փակուելու վրայ է։ Ներքին կառավարութիւնը յանձնուեր է Փափազեան անունով կիսախելագար մի անհատի, որ գլխաւորապէս եղել է քայքայուելու պատճառը։

—Այս օրերս Միրզա-Մեսրովբ-խան Մեսրովբեանն (Րաֆֆիի ընկերութեան նախկին քարտուղարն, իսկ այժմ տնօրէնն) արժանացել է Վեհ. Շահի մասնաւոր շնորհացն, որ բարեհաճել է շնորհել նրան գեներալութեան աստիճան։ Երիտասարդ գեներալը հմուտ է հայերէն լեզուի մէջ, իսկ կատարելապէս ուսումնասիրել է ֆրանսերէն և պարսկերէն լեզուները։ Նա Ուսումնասիրաց ընկերութեան նախկին սաներից մինն է։

* * *

ԵՐԿՈՒ ԹԻՒՐԻՄԱՑՈՒԹԻՒՆ

—

Տեղական հայ լրագրների մէջ իրարանցումն է ընկել մի ինչ որ հեռագրի մասին, որ շրջաբերաբար ուղարկուած է եղել Նոր-Նախիջևանից «Արձագանքին», «Մշակին» և «Նոր-Դարին» պ. Ալաճալեանի ստորագրութեամբ. մինչև անգամ այդ հեռագիրը տպագրուած է «Նոր-Դար» լրագրի № 58-ի մէջ և այդ լրագրի մէջ ասուած է թէ «հեռագրի պատճէնն ուղարկուած է միւս տեղական լրագրներին», իսկ պ. Յ. Սպէնդիարեանը «Մշակի» № 37-ի մէջ տպագրած նամակում ասում է թէ այդ հեռագրի պատճէնն ուղղուած է եղել և՛ «Արձագանքի» խմբագրութեան։ Այդ հանգամանքը զարմանք պատճառեց խմբագրութեանս, որովհետև «Արձագանքի» խմբագրութեան մէջ այդպիսի մի հեռագիր չէ ստացուած. ուստի խմբագրութիւնս պաշտօնապէս ստուգութիւն պահանջեց Թիֆլիզի փոստ-հեռագրական կայարանից, թէ արդեօք ճշմարիտ է որ մեր անունով որևէ հեռագիր եղել է, և ստացաւ հետևեալ տեղեկութիւնները.—Մարտի 26-ին Նոր-Նախիջևանից ստացուել են երեք հեռագիր № 438 բաղկացած 32 բառից. այդ հեռագրների վրայ եղել են հետևեալ հասցէները.

1) Редакція „Ардзаганъ" Спендіарову.

2) Редакція „Мшакъ". Спендіарову.

3) Редакція „Норъ-Даръ" Спендіарову.

Այդ երեք հեռագրները միասին տարուել են «Նոր-Դար» լրագրի խմբագրութիւն և երեքի անդորրագրերի վրայ ստորագրուած է Սպանդարեան, այսինքն՝ երեք հեռագրներն էլ ստացուել են «Նոր-Դար» լրագրի խմբագրութեան մէջ։

Հեռագրատունն իմանալով որ հեռագրները սխալ են հասած, ուղարկել և յետ է պահանջել «Նոր-Դար» լրագրի խմբագրութիւնից և մերժումն է ստացել։

Մենք ի հարկէ չգիտենք և չենք էլ կարող հասկանալ, թէ ինչ էտիկայի հիման վրայ «Նոր-Դար» լրագրի խմբագրութիւնն ստանում է այն հեռագրները, որոնք ուղղուած են «Մշակի» և «Արձագանքի» խմբագրութիւններին, նոյնպէս չգիտենք, թէ ինչո՞ւ պ. Ալաճալեանը իւր հեռագրներից մէկը, որի բովանդակութիւնը վերաբերում է մի Սպէնդիարեանի ուղղում է «Արձագանքին», մինչդեռ «Արձագանքի» խմբագրութիւնը ոչ մի յարաբերութիւն չունի Սպէնդիարեանի հետ։ Սակայն խնդրի հանգամանքից երևում է որ պ. Ալաճալեանը՝ իւր հեռագիրն ուղղելով պ. Սպէնդիարեանին և միևնոյն ժամանակ հայ խմբագրութիւններին, ցանկացել է այդ հեռագրին բաց նամակի բնաւորութիւն տալ, պ. Սպէնդիարեանը մի նամակ է ուղարկել Նորին Վեհափառութեան և այդ նամակի հասցէն գրել է Նախիջևան տիկին Ղազպազեանի անունով։ Վերջինս ստանալով նամակը՝ որի վրայ գրուած է եղել «Խոնարհաբար խնդրեմ հասցնել Նորին Վեհափառութեան», անմիջապէս շտապել է հասցնել, և միայն նամակը բացուելուց յետոյ է իմացուել, թէ «քաջարի քաղաքացի» Սպէնդիարեանը ինչպէս է վարվում մարդկանց և կանանց հետ։

Յ. Սպէնդիարեանի վարմունքն ի հարկէ անհասկանալի է, անհասկանալի է նոյնպէս պ. Սպանդարեանի վարմունքը, թէ նա ինչ իրաւունքով է պահում իւր մօտ ուրիշներին պատկանող հեռագրները։ Երևի երկուսն էլ կը հասկանան, որ հասարակութեան բացատրութիւն տալն անհրաժեշտ է։

* * *

ՊԵԱՏԻԳՈՐՍԿԻՑ մեզ գրում են.—Մարտի 26-ին տեղիս հայ հասարակութիւնը, 'ի նշան իր խորին երախտագիտութեան դէպի նորերս վախճանեալ Պարսկաստանի Ս. Ստեփաննոս Նախավկայի վանքի վանահայր Ստեփաննոս վարդապետ Տէր-Գրիգորեանցը, խմբուել էր եկեղեցում հանգուցեալի հոգեհանգստին ներկայ գտնուելու։ Հանգուցեալ Ստեփաննոս վարդապետը ութսունական թուականների սկզբներում Պեատիգորսկում քահանայ է եղել. Նա մի օրինակելի հովիւ էր, առաքինի քրիստոնեայ ու իր սուրբ պարտաւորութիւններին անձնանուէր մարդ. տնից տուն շրջելով, նա մի քանի տարի շարունակ ձրիաբար պարապել է երեխաների հետ հայոց լեզուով ու այդպիսով տարածել է մայրենի լեզուն օտարախօս հայերի մէջ, աջակցել է ուսումնարանի հիմնարկութեան, եկեղեցու շինութեան աւարտման ու վերջը այստեղից գնացել է բոլորովին աղքատ ու վարդապետ ձեռնադրուել. Նա հրաժարուել է հասարակութիւնից ռոճիկ ստանալ ու միշտ բաւականացել է իր համեստ արդիւնքով։

* * *

Երկրիս պ. կառավարչապետը թոյլատրել է Մոսկվայի համալսարանում պարապ դարձած թոշակները տալ 'ի միջի այլոց այդ համալսարանի հետևեալ ուսանողներին՝ Նիկողայոս Տէր-Թոմասեանցին, Համազասպ Օհանջանեանին և Հմայեակ Տէր-Դաբրիէլեանցին։

* * *

Մեզ խնդրում են տպագրել հետևեալը.

«Անցեալ տարուանից արդէն աշակերտական գրադարանի հիմքը գցելով վերախօս Սաչխերէթումը, և ստանալով մօտ 200 օրինակ զանազան մանկական գրքեր, դորա համար նախ՝ դպրոցիս վարչութիւնը մեծապէս շնորհակալութիւն է յայտնում նուիրողներին, և կրկին խոնարհաբար խնդրում է պ. պ. հեղինակներին, թարգմանիչներին և առհասարակ բարեգործ անձերին օգնութիւն հասցնեն գրադարանի հիմնարկութեանը՝ գրքեր նուիրելով։ Ցանկացող նուիրատուներն իրենց նուէրները կարող են ուղարկել հետևեալ հասցէով՝ (Ст. Квирилы (З. Ж. Д.) Мѣс. Сачхери, учителю Маркару Саатяяцу. Ուսուցիչ՝ Մ. Սահաթեան։

* * *

Հաշտարխանի բժշկական վարչութեան տեսուչ բժշկապետ Մ. Արուստամեանցը, ինչպէս հաղորդում է «Աստրախանսկի Լիստօկ» լրագիրը, այս օրերս թեթև կաթուածի է ենթարկուել։

* * *

նատու չէի. սակայն ես կամենում եմ պարզ ասել ձեզ, թէ մեր նպատակին հասնելու համար—չթաքցնենք այս բանը—մենք կարօտ ենք ոչ միայն մեր երկրի ուրոյն գործողութեան, այլ և մի ուրիշ բանի։ Որքան էլ մենք զօրեղ լինենք, որքան էլ ընդարձակ լինի մեր ազդեցութիւնը,—ուրիշ պետութիւններն էլ մեծ շահ ունին այս խնդրի մէջ, և ինչ քայլ էլ պէտք լինի անել՝ նրանց ձայնը, կարծիքն ու ընթացքը վերին աստիճանի կարևոր են. և ըստ իս՝ կարելի է շնորհաւորել տաճկաբնակ քրիստոնէից բարօրութեան նախանձախնդիր անձերին, որ մինչև այժմ մենք ապահովել ենք Ֆրանսիայի և Ռուսաստանի մտերմական և սրտագին գործակցութիւնը։ (Հաւանութիւն)։ Աւելորդ է ասել, որ մեզանից զատ այդ երկու պետութիւններն են, որ անմիջապէս շահակից են ներկայ խնդրին։ Անցեալ ժամանակներում Ֆրանսիան օգտակար էր համարում գործակցել մեզ, և այդ գործակցութիւնը յաջողակ էր։ Ես մտաբերում եմ, թէ ինչ պատահեցաւ, երբ որ ես պատիւ ունէի նախարարի օգնականի պաշտօն վարելու և մեր նուիրակն էր մի բարեկամ, որ այնուհետև մեծ հռչակ վաստակեց,—ուզում եմ ասել լորդ Դեֆֆերինը,—Սիրիայի գլխաւոր գործակալը։ Այդ միջոցին Ֆրանսիան աջակից էր մեզ մեծ և փրկաբար ռեֆորմներ իրագործելու խնդրում։ Կարիք չունիմ ակնարկելու միւս գործերի վրայ, որ մենք Ֆրանսիայի հետ միաբան գլուխ բերինք Արևելքի ուրիշ հարցերում։ Դուցէ մենք անցեալներում նոյնչափ յաջողութիւն չենք ունեցել որ միշտ Ռուսաստանի հետ միասին և ներդաշնակ գործէինք։ Ուստի վերին աստիճանի նշանաւոր է այն հանգամանքը, որ այժմ Ռուսիան լիովին յօժար է և պատրաստ մեզ հետ միաբան գործելու։ (Լսեցէք, լսեցէք)։ Ես հաւատի եմ, որ Ռուսաց կառավարութիւնն էլ մեզ պէս համոզուած է, թէ վտանգաւոր է անփոփոխ թողնել երկրի այժմեայ վիճակը և փափագում է մի ազդու դարման գտնել աղէտալի չարեաց դէմ։ Քանի որ տևում է ներդաշնակութիւնը՝ մեր ոյժը եռապատկուած է։ (Լսեցէք, լսեցէք)։ Անհրաժեշտ է ի նկատ առնել, որ մենք չպիտի անմիջապէս այն անենք, ինչ որ մեզ լաւ կը թուի, այլ և պէտք է աշխատենք, որ մեր բռնելու ընթացքը չվնասէ այդ անդլին գործակցութեան։ Ես ամենևին չեմ կարծում, թէ պատահած լինի որևէ բան, որ առիթ տար ինձ մի այդպիսի վնասից երկնչելու։ Ընդ հակառակն՝ իմ ստացած բոլոր տեղեկութիւնները վերին աստիճանի քաջալերիչ բնաւորութիւն ունին։ Չեմ էլ ուզում ենթադրել, թէ Բեռլինի դաշնագիրը ստորագրող միւս պետութիւնների համակրանքը մեր կողմը չլինի։ Ես չեմ երկբայում, որ Իտալիայի կառավարութիւնը մեզ համակիր է. իսկ գալով Գերմանիային, ժամանակը որ հասնի՝ նա չի յապաղել այն անել, ինչ որ ցանկալի և անհրաժեշտ կը դատուի։ Սակայն ամենից առաջ մեզ պէտք է կարգադրել մեր անելիքը Ֆրանսիայի և Ռուսաստանի հետ, որոնք զանազան պատճառներով հիւպատոսներ ունին Էրզրումում և կարող են ազդու կերպով մասնակցել գործին։ Ինձ հարցրին, թէ ինչու մենք չենք ներկայացնում հիւպատոսական զեկուցումները։ Առանց քննելու այն խնդիրը, թէ արդեօք անցեալում կարելի էր թէ չէր կարելի հրապարակ հանել այդ զեկուցումները, պարտք եմ համարում ասել, թէ նայելով ներկայ հանգամանքներին, անհնարին կը լինի հրատարակել նրանց այս րոպէիս։ Այժմ մենք ձեռնամուխ ենք եղել ոչ միայն քննութեան, այլ և գիւանագիտական բանակցութեան, և մեր էական շահերին հակառակ կը լինէր, եթէ յատկապէս այս վայրկենին հրատարակէինք տեղեկագրերը,—հակառակ՝ մէկ այն պատճառով, որ քննութիւնը դեռ շարունակվում է, և երկրորդ՝ որ նրանց հրատարակումն աւելի կ'արգելէր մեզ ազատ գործել քան թէ ոյժ կը տար մեր բազկին։ Ատենաբաններից մէկն ասաց, թէ այդ տեղեկագրի լոյս ընծայելը շատ մեծ ազդեցութիւն կ'անէր հասարակային կարծեաց վրայ։ Կարելի է. սակայն խնդրում եմ ձեզ՝ լաւ կշռեցէք,—արդեօք անհրաժեշտ է, քանի որ կառավարութիւնն արդէն զբաղուած է այդ խնդրով, այժմեանից էլ աւելի յուզել հասարակային կարծիքը։ Թող ձեր պատգամաւորութիւնը, թէ ուրիշները և թէ երկրիս ամեն կողմերից ինձ հասնող անթիւ յիշատակագրերը (memorials) միևնոյն հայեացքները յայտնելով և կառավարութիւնից գործ պահանջելով, այնպիսի առատ փաստեր են տալիս մեզ մօտ տիրող կարծիքների միաբանութեան մասին, որ ըստ իս հիւպատոսական զեկուցագրերի հրատարակումն ոյժ չէր տալ կառավարութեան, մինչ դուք անշուշտ կը ցանկանայիք զօրացնել նրան և գուցէ ճանապարհ բանալ Պարլամէնտական գործողութեան համար։ Թաքթաքուն քաղաքականութեան չեմ հետևում ես, երբ որ խորին համոզմամբ ասում եմ, թէ մենք չենք նպաստել մեր պաշտպանեալի շահերին, եթէ այժմ հրատարակենք զեկուցագրերը։

ԳՈՐԾԱԴՐԵԼԻ ԴԱՐՄԱՆՆԵՐԸ

Գանք այժմ դարմաններին։ Ես շնորհակալ եմ ատենաբանների այդ նիւթի վերաբերմամբ շատ չափաւոր լեզու բանեցնելու համար։ Նրանք կարծեմ չեն ուզում թելադրել կառավարութեան, թէ յատկապէս ինչ դարմաններ անհրաժեշտ է գործ դնել։ Ատենաբանները մէկը միւսի ետևից շեշտեցին (և կարծեմ իրաւամբ), թէ ընդհանուրի ցանկութիւնն է՝ ոչ թէ միջոցներ թելադրել, այլ մի այն մեր նպատակն իրագործուած տեսնել։ Կառավարութիւնն էլ դրան է ձգտում, և կարող էք ապահով լինել, որ նա կ'աշխատէ պէտք եղած միջոցները գտնել և արժանապէս գործ դնել։ Վստահ եղէք, որ մենք ուշի ուշով և ամենայն փութով կը կշռենք, թէ յատկապէս ինչ միջոցներ հարկ կը լինի առաջարկել, և յուսով եմ, որ երբ գործելու ժամանակը հասնի, մենք ձեռնունայն և անպատրաստ չենք գտնուիլ։ (Հաւանութիւն)։ Դուք հարկաւ կը ցանկաք, ինչպէս և ես, որ այդ ժամանակը շուտ հասնի։ Սակայն թոյլ տուէք նկատել, որ մի այսպիսի կնճռոտ խնդրի հետ գործ ունենալիս,—որ ի դերև է հանել իրար յաջորդող կառավարութեանց ջանքերը և չէ կարող բնաւ մի կատարեալ ու լիուլի լուծումն գտնել, որովհետև դա անհնարին բան է,—շտապելն օգտակար չէ։ Դուք գիտէք, որ խնդիրն արդէն մի այնպիսի դրութեան մէջ է, որ կառավարութիւնն անհրաժեշտ ստիպուած է գործել և հետևել նրան, և հարցն այժմ ոչ թէ այն է, թէ արդեօք այս ամիս պէտք կը լինի գործել թէ հետևեալ ամսին, այլ թէ այն, որ կառավարութիւնը ջան դնէ իրագործել մեր նպատակը։ Արդ ես գիտեմ, որ ոմանք ձեր ընկերութեան և նոյն իսկ մեր կառավարութեան ընթացքը Սուլթանին և նրա կառավարութեան հակառակ են համարում։ Ես բացէ 'ի բաց մերժում եմ այդ կարծիքը։ (Լսեցէք, լսեցէք)։ Մենք լիովին համոզուած ենք, ինչպէս և դուք, որ ուղղակի Սուլթանի և նրա կառավարութեան շահերը պահանջում են, և նոյն իսկ նրա կայսրութեան հաստատուն մնալուն ձեռնտու է, որ պէտք եղած դարմանները ճշտիւ և լիովին գործ դրուին. վասն զի ինչ է իսկապէս երկրի արդի վիճակը։ Սուլթանի հպատակների մեծ մասը—չգիտեմ ինչ բառ գործածեմ, որ մեղմ լինի—այնքան դժգոհ են կառավարութիւնից, որ նրանցից շատերն անկասկած յեղափոխական մտքեր են տածում։ Եւ դա վատ վարչութեան անհրաժեշտ ու բնական հետևանքն է։ Միւս կողմից ապացուցի անկարօտ ճշմարտութիւն է, որ եթէ երկրի վիճակն այդպէս է, այն ժամանակ ամենահասարակ իմաստութիւնը կը պահանջէր՝ բառնալ մէջտեղից դժգոհութեան պատճառը, որովհետև եթէ դա վերցուի, յեղափոխական կուսակցութիւնն էլ բնականաբար անզօր կը լինի ոչ և է չարիք հասցնել։ Իմ համոզմունքն այս է, հարկաւ և ձերը, որ եթէ հայ ժողովուրդն ազնիւ և արդար կերպով կառավարուի, Սուլթանը ոչ թէ թշնամիներ կը գտնէ նրա մէջ, այլ օգնականներ. և ամեն մարդ, որ չէր կամենալ մի սուր ընթացք տալ արևելեան խնդրին, պարտաւոր է—նոյն իսկ սոսկ քաղաքականութեան տեսակէտից, եթէ չասենք մարդասիրութեան—խոստովանել, որ Սուլթանին էլ, նրա կայսրութեան էլ, Եւրոպայի խաղաղութեան էլ օգտակար է գործ դնել այնպիսի միջոցներ, որոնք վերջ դնէին վատթար վարչութեան և արմատախիլ անէին դրա չարիքը, գոհացնէին ժողովրդին, որ այժմ այնքան պատճառներ ունի իրաւամբ դժգոհ լինելու։ (Լսեցէք)։ Պարզ է որ արևելեան կոչուած խնդրի բոլոր առանցքը Սուլթանին հպատակ ազգաբնակութեան մէկ մասի դժգոհութեան մէջ է։ Հենց այն օրից, երբ դժգոհութեան պատճառը կը վերցուի, արևելեան խնդիրը կը դադարի վտանգաւոր լինել։ Ես այնքան դիւրահաւատ չեմ, որ ենթադրեմ, թէ այդ վտանգը միանգամայն կ'անհետանայ։ Թիւրքաց պետութեան մէջ այնքան տարբեր ցեղեր, այնքան իրար թշնամի կրօններ և ուրիշ պատճառներ կան, որ այդ հարցի վերջնական լուծումը մի ուտոպիա (ցնորք) կարող է երևալ։ Բայց և այնպէս հաւաստի եմ, որ շատ բան կարելի է անել, և հիմք ունիմ կարծելու, թէ յատկապէս այժմ կարելի է անել, որովհետև եւրոպական պետութիւններից և ոչ մէկը մտադիր չէ սուր ընթացք տալ արևելեան հարցին. և այդ արդէն ապացոյց է, որ մեր փափագած համերաշխ գործակցութիւնը՝ անմիջապէս դարման անելու մտօք այժմ մի անկեղծ ու ճշմարիտ գործակցութիւն կը լինի—առանց շփոթելու այն ամեն քաղաքական նպատակների և ձգտումների հետ, որոնցով թերևս առաջնորդվում են զանազան պետութիւնները, բայց որոնք չպիտի ազդեն նրանց բռնելու ընթացքի վրայ ներկայ գլխաւոր դէպքում. Այս է, ըստ իս, բոլոր խնդրի ամենից շատ սրտապնդող հանգամանքը, և գուցէ դրանով արդարանայ, եթէ կամենաք, մեր նախորդ կառավարութեանց անգործութիւնը. վասն զի ինձ յայտնի չէ, որ անցեալում պատահած լինի դէթ մի և է յարմար առիթ, երբ իմ տեղը կանգնած մի նախարար հնար ունենար նոյն վստահութեամբ ասել, թէ այս մեծ խնդրին շահակցող Եւրոպայի միւս պետութիւններն էլ համամիտ են իմ այս րոպէին արտայայտած հայեացքներին։ Չգիտեմ, ուրիշ ինչ բան աւելացնեմ, բայց եթէ ասել, թէ ոչ ոք մեր կառավարութիւնից աւելի լուրջ չէ վերաբերվում խնդրին և աւելի բուռն չէ փափագում՝ յամենայն դէպս մի դարման գործ դնելու, եթէ դա մինչև անգամ լիակատար էլ չլինի. ինչպէս որ մենք կը ցանկայինք։ Կարող եմ միայն վստահացնել ձեզ, որ մենք այս ուղղութեամբ ջանադիր կը լինենք ձգտել, և քանի որ ձեր հաւատարմութեան անարժան լինելու առիթ չենք տուած, յուսով եմ որ կը հաւատաք, թէ մենք կ'անենք, ինչ որ միայն հնարաւոր է իրագործելու ձեր սրտագին իղձերը, որոնք չէականին մեզ համար էլ նոյնքան թանգ են, որքան և այսօր ինձ դիմող ջենտլմէնների համար։ (Հաւանութիւն)

Միստր Ստեվենսոնը շնորհակալութիւն յայտնեց լորդ Կիմբերլէյին այդ պատասխանի համար, և պատգամաւորութիւնը մեկնեցաւ։

Փ. Վ.

ՍԻՄՖԵՐՕՊՕԼԻՑ մեզ գրում են. «Մարտի 19-ին տեղւոյս հայ ուսումնարանի դահլիճում կայացաւ գրական-երաժշտական երեկոյթ կենդանի պատկերներով՝ յօգուտ նոյն ուսումնարանի կից բացուած կար ու ձևի արհեստանոցին՝ նախաձեռնութեամբ մեծ. օր. օր. Միսերեանի, Ղարամուրզայեանի և Դոմպէյեանի։ Երեկոյթին մասնակցում էին ինչպէս սիրողների խումբը, նոյնպէս և տեղւոյս հայ ուսուցիչները։ Դահլիճը համարեա լիքն էր հանդիսականներով, որոնց ուշադրութիւնը առանձնապէս գրաւում էր պ. Ա. Ալեանակեանի աշխատութեամբ կազմած բառաձայն երգեցիկ խումբը, որ դաշնամուրի ձայնակցութեամբ գեղեցիկ երգեց՝ «Զարթիր, սիրտ իմ», «Հանգիստ իմ անոյշ», «Արեւն ելաւ» և Պատկանեանի յայտնի «Լաց» ազգային երգերը։ Լսում ենք, որ ծախքը հանած զուտ արդիւնք մնացել է 120 ռ.»։

***

Թիֆլիզի Փոխադարձ Վարկի Ընկերութեան ընդհանուր ժողովում որոշուած էր 300 ռուբլի բաժանել Զատկին Թիֆլիզի չքաւորներին 'ի յիշատակ նոյն բանկի խորհրդի անդամ հանգուցեալ Պօղոս Իզմայլեանի։ Ընկերութեան վարչութիւնը մարտի 29-ին այդ գումարն ուղարկել է Բարեգործական Ընկերութեան ատենապետուհի տիկ. Ե. Բ. Ջեբեժնտիեվային՝ խնդրելով գործ դնել փողը յիշեալ նպատակով։

***

Բժշկապետ Աւետիք Բարայեանից ստացանք առանձին տետրակով հրատարակուած մի հետազօտութիւն, որ կրում է «Случай наслѣдственной спазмадической спинной сухотки въ связи съ истерическими формами той же болѣзни» վերնագիրը։ Դրքոյկն արտատպուած է Կայսերական Կովկասեան Բժշկական Ընկերութեան արձանագրութիւններից։

***

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մարտի.

(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Ձանր տպաւորութեան տակ գրում տողերս և խնդրում եմ Խմբագրութեանդ մի տեղ շնորհել նորան։

Այսօր տեղւոյս հայ ուսանողները հողին յանձնեցին՝ նոցա ամենքից յարգուած և սիրուած մի ընկերոջ՝ Յարութիւն Օհանջանեան Հախումեանցի մարմինը, որ ամսոյս 21-ին երեկոյեան վերջ տուաւ իւր կեանքին՝ ատրճանակն ուղղելով ձախ կողքին (սրտին)։ Հանգուցեալը վերջացնելով Բագուայ ռէալական դպրոցը, աշա չորրորդ տարին է Պետերբուրգումն էր և ուսանում էր տեխնօլօգիական ճեմարանում. սակայն անցեալ տարի ստիպուած էր թողնել ճեմարանը հիւանդութեան պատճառաւ։ Այդ ժամանակամիջոցում նա գրաւել էր բոլոր թէ հայ և թէ այազգի ուսանողների համակրանքը և սէրը իւր բարի, ազնիւ, լուրջ և տոկուն բնաւորութեամբ։ Նա ուսանողների մէջ առաջնակարգ տեղ էր բռնում. Նորա այդ դրականական մաքը շանթահար է արել բոլոր ընկերներին, որոնք երբէք չեն կարող մոռանալ իրանց մտերմին։

Այսօր գրեթէ բոլոր հայ ուսանողները հաւաքուել էին Ալէքսանդրեան հիւանդանոցը (ուր տեղափոխել էին հանգուցեալի դիակը)՝ յուղարկաւորելու և վերջին հրաժեշտը տալու իրանց թանկագին ընկերոջը։ Հիւանդանոցից մինչև հայոց եկեղեցի, և եկեղեցուց մինչև հանգստարան աշագին ճանապարհների մեծ մասը դագաղը և պսակները (1. ազգականներից, 2. թանկագին Յար. Հախումեանցի—ուսանող տեխնօլօգներից և 3 ազնիւ Յարութիւնի ընկերներից) տանում էին ընկերները ձեռքի վերայ, որ Պետերբուրգում շատ սակաւ դէպքերում կարելի է տեսնել։

Հանգուցեալի անձնասպանութեան պատճառը բոլոր ընկերները վերագրում են նորա հիւանդութեանը։ Վերջին ժամանակներս նա լուրջ ուսումնասիրում էր հոգեբանութիւն, սաստիկ մելամաղձոտ էր և կասկածաւոր դէպի իւր հիւանդութիւնը։

Հանգուցեալի մօտ ընկերները մտադիր են նորա յիշատակը յարգել մի բարի հիմնարկութեամբ։

Յ. Ճ[illegible]

***

ԲՈՒՂԱՐԻԱՅԻ ԷԳԶԱՐՔՈՍԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ Կ. ՊՈԼՍՈՅ ՀԱՅՈՑ Ս. ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Պուլկարաց Էկզարք Գեր. Տ. Եօսիֆ շաբաթ օրը ժամ 9-ին Պատրիարքարան եկաւ շնորհաւորական այցելութիւն տալու Ամեն. Ս. Պատրիարք Հօր։ Գեր. Եօսիֆի կընկերանային Իւսկիւպի Նախորդ մետրապոլիտ Տ. Մաքսիմ, Էկզարքարանի փոխանորդ Տ. Թէօֆիլ և գործակատար Սօրկաքի Էֆէնտի։

Պատրիարքական Փոխանորդ Գերապ. Դաբրիէլ վարդապետ՝ շրջապատեալ վարդապետներէ ու քահանաներէ, Պատրիարքարանի դուռնէն ընդունեց Գեր. Էկզարքն և վերի սրահը առաջնորդեցին Ամեն. Ս. Պատրիարք Հայրն՝ իր շուրջն ունենալով Գեր. Տիմոթէոս ու Աբրահամ եպիսկոպոսները, Քաղաքական ժողովոյ երկրորդ ատենապետ Յովակիմեան Միհրան ու երկրորդ ատենադպիր Թընկըրեան Աւետիս էֆէնտիներն, ինչպէս նաև Պատրիարքարանի գլխաւոր պաշտօնեաներն, ընդունեց Գեր. Էկզարքը։ Ս. Պատրիարքն ու Ն. Գերապատուութիւն գիրար ողջագուրելէ յետոյ մտան ընդունելութեան սրահն։ Հոն, Գեր. Էկզարքը ոտքի վրայ՝ ֆրանսերէն բանախօսութիւն մը արտասանելով, շնորհաւորեց Ն. Ամենապատուութիւնն ինչպէս նաև ազգն, որ արժանաւոր ընտրութիւն մը կատարած էր յանձին Տ. Մատթէոս Սրբազանի, և մաղթեց որ Տէրն մեր Յիսուս զօրավիգ պիտի ըլլայ Ն. Սրբազնութեան իր հոգևոր ծանր պաշտօնին մէջ։ Գեր. Էկզարքը խօսեցաւ հայ ու պուլկար Եկեղեցեաց միջև եղած եղբայրական ու քրիստոնէավայել յարաբերութեանց վրայ և խօսքն աւարտեց բարեմաղթութիւններ ընելով Ամեն. Ս. Պատրիարք Հօր, որ պատասխանելով շնորհակալութիւն յայտնեց Ն. Գերապատուութեան կողմէ արտայայտուած այս համակրութեան համար։ Ամեն. Ս. Պատրիարք Հայրն ու Գեր. Էկզարքը փոխադարձաբար միմեանց ներկայացուցին ներկաները և քառորդ ժամու չափ սիրալիր տեսակցութենէ մը յետոյ, Ս. Պատրիարք Հայրն խնդրեց Գեր. Էկզարքէն որ Մայր եկեղեցի իջնէ և ժողովուրդն օրհնէ։ Ն. Գերապատուութիւն հրաժեշտ առնելով և շնորհակալութիւն յայտնելով իրեն եղած ընդունելութեան համար, առաջնորդութեամբ Գեր. Տիմոթէոս ու Աբրահամ եպիսկոպոսներու, Գեր. Փոխանորդին և վարդապետաց ու քահանայից, իջաւ ի Մայր եկեղեցի, որուն խորանին ու բոլոր ջահերուն լոյսերը վառուած էին և դուռնէն մինչև սեղան, գետինը ծածկուած էր արևելեան գեղեցիկ գորգերով. եկեղեցին լեցուած էր ժողովրդեան խուռն բազմութեամբ։ Տաճարին դուռը կըսպասէին զգեստաւորեալ քահանաներ, երկու սարկաւագներ և բազմաթիւ դպիրներ որք «Հրաշափառ» շարականն երգելով Գեր. Եօսիֆն ու իրեն ընկերակցող եկեղեցականները ներս առաջնորդեցին հանդիսաւոր կերպով։

Գեր. Տ. Եօսիֆ սեղանին վրայ ելնելով խորանին առջև աղօթեց և յետոյ բազմեցաւ մասնաւորաբար դրուած աթոռի մը վրայ։ Շարականներու աւարտումէն յետոյ, Ն. Գերապատուութիւն ոտքի ելնելով թուրքերէն բանախօսութիւն մը արտասանեց, որով նախ և առաջ շնորհակալութիւն յայտնեց իրեն եղած ընդունելութեան համար, ըսելով որ համակրական այդ ցոյցեր իր անձէն աւելի կը պատկանէին պուլկար եկեղեցւոյն զոր ներկայացնելու պատիւն ունէր։ Պուլկար եկեղեցին, յարեց Ն. Գերապատուութիւն, միշտ համակրանք կը տածէ առ հայ եկեղեցին իբրև քոյր եկեղեցի մը և հայ ժողովուրդը ծանօթ է քրիստոնէավայել առաքինութեամբ, պարկեշտութեամբ ու աշխատասիրութեամբ։ Տ. Եօսիֆ մաղթեց որ Յիսուս Քրիստոս, հիմնադիրն Եկեղեցւոյ, միշտ պահէ ու պահպանէ հայ եկեղեցին և երկար ու բարեբաստիկ կեանք շնորհէ Ամեն. Տ. Մատթէոս արժանընտիր Պատրիարքին։ Յետոյ Գեր. Էկզարքն օրհնեց ժողովուրդն, որ համակրանքով պատասխանեց։

Դպիրք սկսան երգել «Որ զշնորհս» շարականն և Գեր. Էկզարքն ու իր հետևորդք հանդիսաւոր կերպով դուրս ելան։ Տ. Եօսիֆ կառք նստելու պահուն խնդրեց Պատրիարքական Գեր. Փոխանորդէն՝ որ իրեն եղած ընդունելութեանց համար իր շնորհակալութիւնները մատուցանէ Ս. Պատրիարք Հօր։

(«Արև.»)։

Ա Զ Դ

Խմբագրութիւնս խնդրում է „Արձագանքի“ բաժանորդներին որ հասցէն փոխելու դէպքում անպատճառ յայտնեն իրենց առաջուան հասցէն և միևնոյն ժամանակ ուղարկեն նոր հասցէի տպագրութեան համար 50 կոպէկի փօստային մարկա. հակառակ դէպքում բոլոր գրուած նամակները կմնան առանց ուշադրութեան։

ՏԱՃԿԱ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՄՈՒՇԻՑ մեր թղթակիցը հաղորդում է մեզ. «Բողոքարիու Հայերի թիւը, որոնք առհասարակ կը պատկանին շրջակայ գաւառական ազգարնակութեանց, գնալով կ'աճի և կրտսաւորանայ Քննիչ Յանձնաժողովի շուրջ։ Հակառակ լիշխանութեան կամքի և նորա գործ դրած արգելառիթ միջոցների, այժմ մօտաւորապէս 250 գերդաստանի ներկայացուցիչներ կան քաղաքս, որոնք օրուայ հացի կարօտ մնալով ստտանդական վիճակի են մատնուած։

Այդպիսիների թիւն կը պատկանին ի միջի այլոց 250 տնից բաղկացած Խըրպեան Հայարնակ գիւղի աւագագոյն անձինքներէն Տէր Աւետիսեան Աւաքել աղան։ Սա բողոքելով հանդերձ այժմ իրանց գիւղի մէջ վերահաստատուած խայեան ցեղին պատկանող յայտնի աւազակ-ասպատակ քիւրդ Մուհամմէտ Ալիի եօթ երկար տարիների գործ դրած անլուր զրկանքների դէմ արդարութիւն է պահանջեր։ Այս ամենի առաջին ու գլխաւոր հերոսն է եղեր ինք աւազակապետ Մուհամմէտ-Ալին, իւր եղբայր Դաւրիշ (այժմ չկայ), նորա աւագ թիկնապահ Խալիլօն, Իպօն, Մըսթոն և ուրիշ 12 յայտնի չարագործ քիւրդեր։ Եւ աւհա նա արդէն երեք տարիէն աւելի է, ինչ որ կապրի Խըրպեան գիւղի մէջ նոյն գիւղի գլխալ ու հարստահարեալ տնանկ ժողովրդի հաշուով, և բացի իւր հետ ապրեցնելէ իւր ցեղին պատկանող այլ տասնեակ անձինքներ, վերստին տէր է անլուր չարութեանց։

Կ. Պօլսոյ լրագրներից քաղում ենք հետևեալ լուրերը.

—Կայս. Իրատէի մը համաձայն, Բարձր. Մեծ Եպարքոսը հրահանգ գրկած է բոլոր նահանգները քննել և տեղեկագրել թէ գաղթականներու բնակութիւն հաստատելուն յարմար ծրջափ պարապ գետիններ կան, և ղրկել անոնց քարտէսները։ Պրուսայի նահանգին կուսակալութիւնը, պատասխանելով, տեղեկագրած է թէ 110,000 արտավար պարապ գետին կայ այդ նպատակին յարմար։

Իփ[illegible] կ'իմանայ թէ Նախիջևանէն Գարաբաղք ցեղին պատկանող 3000 տնւոր 30,000 խալամ օսման. կայսերական կառավարութեան դիմած են Թուրքիա գաղթելու և օսմ. հպատակութիւնն ընդունելու համար և թէ ասոր համար հարկ եղածը գործադրուելու վրայ է։

ՀԱՆՐՈՑԻՆ պարտուց վարչութիւնը որոշած է երկու պատճառներով մերժել այն ծրագիրն, որով առաջարկուած էր գրոշմաթուղթ փակցնել օտար երկիրներէ բերուած լրագիրներու վրայ։ Առաջին պատճառ այն է, թէ այդ գործողութիւն շատ դժուար պիտի ըլլայ և երկրորդ թէ ծախքերը հանուելէ յետոյ հազիւ տարեկան հարիւր-հարիւր քսան ոսկի պիտի մնայ։

ՊՕՇՏՕՆԱԿԱՆ ՁԵԿՈՒՑՈՒՄ.—Հալէպէն, Խարբերդէն, Էնկիւրիէն, Տրապիզոնէն, Էրզրումէն, Տիարպէքիրէն, Վանէն, Գասթէմունիէն և Պիթլիսէն եկած հեռագիրներ կը ծանուցանեն թէ, շնորհիւ Վեհ. Սուլթանին, այդ տեղերու մէջ որև է դէպք չէ պատահած։

Խառն ժողովն երէկ ի նիստ գումարուեցաւ ի Պատրիարքարան ընդ նախագահութեամբ Ամեն. Ս. Պատրիարք Հօր և ի միջի այլոց զբաղեցաւ թափուր մնացած առաջնորդութեանց խնդրով։ Ժողովը որոշեց նախ պատրաստել անպաշտօն եպիսկոպոսաց ու վարդապետաց ցանկը և յետոյ թափուր վիճակաց համար անոնցմէ ընտրութիւն կատարել։

Խառն ժողովոյ երեկի նիստին մէջ կարդացուեցաւ Գեր. Գրիգորիս արքեպիսկոպոսի մէկ գիրն, որով կ'ընդունի Ատանա երթալով Կիլիկոյ Կաթողիկոսին ընտրութիւնը կատարել տալու պաշտօնը։ Ն. Գերապատուութեան Կ. Պօլսէն բացակայութիւնը վեց ամսէն աւելի չպիտի տևէ։ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Զատկէն ետքը ճամբայ պիտի ելնէ։

«ԱՐՁԱԳԱՆՔԻ»

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԵՌԱԳՐԱԿԱՆ» ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

Մարտի 30-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ.—«Պրավիտ. վեստնիկում» հրատարակուած էր Ռուս-դանիմարքեան առևտրական դաշնագիրը, որ բարձրագոյն հաստատուած է մարտի 2 ին։

Լրագրները հաղորդում են, որ ռուսաց ս[illegible] նոզին կից կազմուած զիւղական խորհուրդն առաջարկել է յատկացնել Բարձրագոյն շնորհուած 700 հազար ռուբլուց ծխական-եկեղեցական դպրոցներին օժանդակելու համար 60 հազար ռուբլի, որպէս զի դրանով պահպանուին ծխական դպրոցների վարչութիւնները 30 նահանգներում, որտեղ մտցրած է զեմսկի սահմանադրութիւնը։

Պետական խորհուրդը որոշեց պետական գանձարանից հինգ տարուան ընթացքում յատկացնել 5000 ռուբլի՝ սկսած 1895 թուականից, որպէս զի այդ գումարով կազմակերպուին և պահպանուին առանձին դասընթացներ՝ գիւղատնտեսական դպրոցների ուսուցիչներ պատրաստելու համար։

ՍԻՄՕՆՕՍԵԿԻ.—(Րէյտեր) Լի-Հունգ Չանգը բոլորովին առողջացել է և այսօր անձամբ վերանորոգեց խաղաղութեան մասին բանակցութիւնները։

Մարտի 31-ից.

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ. — «Նով. Վր.»-ին հեռագրում են Սօֆիայից.—Մակեդոնացիների ժողովը վճռել է Սօֆիայում հաստատել մշտական մակեդոնական կոմիտէտ։ Ժողովի անմիջական հետևանքներից մէկն այն կը լինի որ նշանաւոր դէպքեր տեղի կ'ունենան Մակեդոնիայում։

«Նովօստին» հաղորդում են Բելգրադից, թէ Սերբիայի պատամխտ կուսակցութիւնը ձեռնպահ է մնում ընտրութիւններին մասնակցելուց։

ՎԻԵՆՆԱ. — Ֆրանց Կօշուտը 140 ձայնի առաւելութեամբ ընտրուած է պատգամաւոր Տապօլցում։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՈՐՍԱՆ

Մարտի 30-ից.

Վեքսէլի կուրս 3 ամսով.

Լօնդօնի վրայ 10 ֆ. ստ.	93,04
Բերլինի վրայ 100 մարկ	45,42½
Փարիզի վրայ 100 ֆր.	36,80
Նոր կտրած պօլուիմպերիալներ	7,40 գն. 7,43 [illegible]
Բօրսայի զեղչը	5-ից 7%
4% Պետակ. արժեթղթ.	99⅞
5% ոսկ. արժեթ. 1894 թ.	164
5% Առաջ. Ներքին փոխ. խաղատոմս 1864 թ.	242
5% Երկր. Ներք. փոխառ. խաղատոմս 1866 թ.	227
5% Ազնուակ. հող. բանկի գրաւակ. խաղատոմս.	214½
5% Պետակ. երկաթուղ. արժեթուղթ	101⅝
4% Ներքին փոխ. I սեր.	99⅜
„ „ „ II „	99⅜
„ „ „ III „	99⅜
„ „ „ IV „	99⅜
4½% փոխ. 1893 թուի	101⅝
„ փոխ. 1 հրատարակ	102
„ փոխ. 2 հրատարակ.	101⅝
4½% Գրաւակ. արժեթղ. ազն. հողային բանկի	101⅝
4½% Գիւղական հողային բանկի վկայաթղթեր	101⅝
5% Ս. Պետ. քաղ. վ. ընկ.	101⅝
„ „ Մոսկուայի	101½
5½% Օդեսայի	100¼
5% Թիֆլիզի	99⅝ գն.
5% Գրաւակ. արժթ. հող. բանկերի Խարկովի	100¾
„ Պօլտավայի	100⅜
„ Տուլայի	100¼
„ Կիեվի	100¼
„ Մոսկուայի	100¾
„ Բեսարաբիայի	100⅛
„ Ներքին-Սամարայի	100¼
„ Դօնսկոյ	100
„ Վիլենսկի	100¼
6% և 5% Քութայիսի	101 և 99½ գն.
„ Թիֆլիզի	101¾ և 99½ գն.

Խմբագիր-Հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ Բ. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուկիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամէն օր, բացի կիւրակի օրերից.

ՌՈՒՍՈՒՕՑՆԵՐԸ՝

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան սիֆիլիսի և վեներական հիւանդութիւնների։

Կ. Մ. ՉԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի ներքին և նեարդային հ.

Դ. Գ. ՐՈՒԴԿՈՎՍԿԻ—10—11 ժամը ներքին, երեխայոց և կանանց հ.

Կին-բժիշկ ՏՈՒՐԲՈՎԻՉ—11—12 ժ. կանանց հ.

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻՉ—12—1 ժ. ականջի, կոկորդի, քթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ներքին և երեխայոց հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ՝

Ա. Գ. ԴՈՒՐԿՕ—6—7 ժ. Սիֆիլիսի, մէզի ու սեռական օրգանների հ.

Բ. Ա. ՆԱԻԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.

Ա. Գ. ԴՈՒՐԿՕ քիմի-խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի և այլն։

Վճար 50 կ. Համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Հիւանդանոցումը ընդունւում են և ՏԻՖԵՐՕՏԻԿ ՀԻՒԱՆԴՆԵՐ.

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ Ն[illegible]

ԲԺՇԿԱԿԱՆ ԸՆԴՈՒՆԱՐԱՆ

ԲԺՇԿ. ԴՕԿՏՕՐ

ԱՒԵՏԻՔ ԲԱՐԱՅԵԱՆԻ

Սօլօլակ, Սերգիեվսկի փողոց № 14.

Բացի դեղերից գործադրւում են նաև զանազան տեսակ ՋՐԱԲՈՒԺԱԿԱՆ, Ե ԼԵՔՏՐԱԲՈՒԺԱԿԱՆ և այլ ֆիզիքական մեթօդներ.

ՆԵՐՔԻՆ և ՆԵԱՐԴԵԱՅԻՆ ՀԻՒԱՆԴՆԵՐ

ընդունվում են ամեն օր (բացի կիւրակի և տօն օրերից)

12½—1½ ժ. ցերեկը	կինարմատներ և երեխաներ
1½—2-ը ժ. ցերեկը և 7-ին մօտ երեկոյեան	տղամարդիկ։

Ընդունարանում գտնվում են որոշեալ ժամերում մանկաբարձ — մասսաժ անող կին և մասսաժիստ պարոն։

Քաղաքային հիւանդանոց

(Մուխրանեան փ., տ. Կուզանեանի, № 15. հիմնել են Թիֆլիզի քաղաքացիները երթևեկ հիւանդների համար 1866 թ. ապրիլի 4-ի յիշատակին)։

Հիւանդների ընդունելութիւն ամեն օր, բացի կիրակի օրերից, ձմեռն առաւօտեան ժամը 9—1, ամառը (յունիսի, յուլիսի և օգոստոսին) առաւ. ժամը 8—12.

Վ. Մ. [illegible] — ներքին, երեխանց և ջղային հիւ. ժամը 10½—12 ամեն. օր։

Կ. Ա. [illegible]—ներքին և երեխանց, ժ. 10½—12 ամեն օր։

Դ. Գ. [illegible]—խիրուրգ. և մէզի անդ. ժ. 12—1 ամեն օր։

Բժշ[illegible] Գ. [illegible] սիֆիլիս և մէզի անդ. հիւանդ. 11—12 ամեն օր։

Մ. Ա. [illegible]—ներքին և վեներական, ժ. 12—1 ամեն օր բացի հինգշաբթի։

Բժ. Մ. [illegible]—ներքին հիւանդութ. 12—1 ամեն օր.

Բժ. [illegible] — ներքին և երեխանց հիւնդ. 12—1 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. [illegible]—կանանց ժ. 9—11 ամեն օր։

Ն. Գ. [illegible] — ներքին և երեխանց, ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Լ. Ե. [illegible]—կանանց, ժամը 11—12 ամեն օր։

Ե[illegible] Ա. [illegible] — ներքին, երեխանց և ատամի, ժամը 9—10 ամեն օր։

Մ. Ա. [illegible]—ներքին և ջղային, ժամը 11—12 ամեն օր։

Գ. Ն. [illegible]—ներքին, մէզի անդ. և վեներական, ժամը 12—1 ամեն օր։

Գ. Ա. [illegible] — ներքին և խիրուրգ., ժ. 12—1 ամեն օր։

Կին-բժ. Ս. Ա. [illegible]—աչքի և կանանց, ժամը 12—1 ամեն օր։

Ատ[illegible] Ա. Օ. Օրբէլի—ատամներ, ժամը 10—11 ամեն օր։

Կոնսուլտացիոնը երեքշաբթի և ուրբաթ օրերը ժ. 12—1. Ծաղկի պատուաստումն—չորեքշաբթի և շաբաթ օրերը, ժամը 9—1։

ՀԱՒԼԱԲԱՐԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Կախէթինսկայա փ., տ. Տէրտէրեանի)

Մ. Ա. [illegible]—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. [illegible]—կանանց, ժ. 11—12 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

ԽԱՐՓՈՒԽԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

(Ռաննիա վօրոտա, տ. Ենֆիաճեանի)

Գ. Բ. Տէր-[illegible]—ժամը 11—12 ամեն օր։

Կին-բժ. Մ. Ա. [illegible]—կանանց, ժ. 11—1 երեքշաբթի և ուրբաթ օրերը։

[illegible].—Չքաւոր անձերին բժշկական խորհուրդ և դեղեր տրւում են ձրի։

Քաղաքային բուժարանի կառավարիչ՝— Գ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Ուրբաթ, ապրիլի 7-ին 1895 թ. առաւօտեան ժամը 11-ին Ս.-Նշան եկեղեցու դպրոցի դահլիճում նշանակուած է ՀԱՅՈՒՀԵԱՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ։

Ժողովի պարապմունքներն են.

1) Անցեալ 1894 թուականի ընդհանուր ժողովի արձանագրութեան ընթերցումը.

2) Անցեալ 1894 թ. Ընկերութեան ելևմտից հաշուի քննութիւնն ու հաստատութիւնը.

3) Սոյն 1895 թ. նախահաշուի քննութիւնն ու հաստատութիւնը.

4) Վարչութեան միամեայ գործունէութեան տեղեկագրի ընթերցումը.

5) Ընկերութեան պատուաւոր անդամի ընտրութեան մասին վարչութեան առաջարկութիւնները.

6) Սուրբ-Նշան եկեղեցու դպրոցի հինգերորդ բաժանման բացման մասին վարչութեան առաջարկութիւնը։

(2—1)

ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ, ՄԱՐԻԱՄ ՍԱԴՈՎՆԻԿԵԱՆ և ԳԱՅԻԱՆԷ ԲՈՒՂԴԱՆԵԱՆ խորին ցաւով յայտնելով՝ առաջիններս իրանց թանկագին մօր և վերջինս մեծ մօր՝

ԹԱՄԱՐ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑԻ

մահը, խնդրում են ազգականներին և ծանօթներին շնորհ բերել հանգուցեալի յուղարկաւորութեանը ապրիլի 4-ին, երեքշաբթի օրը, առաւօտեան 10 ժամին իրանց բնակարանից (Ելիզավետեան փող., տուն Տէր-Դաւթեանի, № 46) Թանդոյեան Ս. Աստուածածին եկեղեցին։

Ամբիծքը կկատարուի ապրիլի 3 ին, երեկոյեան 7 ժամին։

(1—1)

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„ՌՕՍՍԻԱ“

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՏՈՒԱԾ 1881 Թ.

Ս. Պետերբուրգում, Большая Морская, № 37.

ՀԻՄՆԱԿԱՆ ԵՒ ՊԱՀԵՍՏԻ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐ 22,000,000 ՌՈՒԲԼԻ

Ընկերութեան տոկոսաբեր թղթերը պահվում են պետակ. բանկում։

Ընկերութիւնը ընդունում է՝

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆԸ

այսինքն դրամագլուխների և եկամուտների, [illegible] կամ [illegible], [illegible] համար, [illegible] համար և այլն, առանձին շահաւէտ պայմաններով և ապահովագրողների մասնակցութեամբ Ընկերութեան օգուտներին։

1894 թուի յունվարի 1-ին «ՌՕՍՍԻԱ» ընկերութեան մէջ ապահովագրուած էին 28,246 անձինք 75,621,010 ռուբլի դրամագլով։

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐԻՑ

թէ [illegible], նոյնպէս և [illegible], —պակասեցնելով ապահովագրական վճարները, գիվիդենտի փոխարէն։

ՀՐԴԵՀԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

ամեն տեսակ շարժական և անշարժ կալուածքների ([illegible] և այլն)։

ՏՐԱՆՍՊՈՐՏՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ

[illegible]

Ապահովագրութեան մասին յայտարարութիւններն ընդունվում են և [illegible] հաղորդվում են Վարչութեանը Ս. [illegible] (Большая Морская, սեփական տուն, № 37), Կովկասեան Հրջանի համար ընկերութեան վարչութեան մէջ, որ գտնվում է՝

ԹԻՖԼԻԶՈՒՄ, Սերգիեվսկայա փ. տ. № 6. և բոլոր գործակալութիւններում կայսրութեան բոլոր քաղաքներում։

Ապահովագրական տոմսակներ՝ ճանապարհորդներին ապահովագրելու համար դժբախտ դէպքերից՝ երկաթուղիներով և շոգենաւերով ճանապարհորդութեան ժամանակ տրվում են նոյնպէս երկաթուղիների կայարաններում և շոգենաւային նաւահանգիստներում։

(50—11)